

12(705)

2024

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զիմաստությունն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍԱՐԱՐ

Лусарар

ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ

Lusarar

ԱՄԱՆՈՐԻՆ ԸՆԴՈՒՋ ԿԱՄ՝ ՋՐՈՒՅՑ ՁՄԵՌ ՊԱՊԻ ՇԵՏ

Այս բանաստեղծությունը երջանկահիշատակ բանաստեղծ, Արցախի Հանրապետության օրհներգի տեքստի հեղինակ **Վարդան ՀԱՎՈՐՅԱՆԸ** գրել էր «Լուսարար»-ի խնդրանքով, որը տպագրվել էր «Լուսարար»-ի 2018 թվականի տարեվերջյան համարում, Ամանորից առաջ:

Այն ժամանակ մենք ապրում էինք հայրենի Արցախում՝

լի հավատով, որ արդեն կայացած մեր պետականության հիմքերն անասան են, ու ոչինչ չի կարող խաթարել հայոց զինական ուժով ձեռք բերված խաղաղությունը: Եվ դրան հավատալու բոլոր նախադրյալներն էլ կարծեք կային: Սակայն...

Բանաստեղծությունը նվիրված է Ամանորին, բայց այն

ավելի շատ խաղաղության մասին է. երևի անվանի պոետը կանխագուժ էր վերահաս աղետը, որն երկու տարի անց անողորմորեն փլվեց արցախահայության գլխին:

Թող գալիք տարին խաղաղություն և ազգային իղծերի իրականացում բերի մեր ժողովրդին:

Ես նկարեցի եղևնի տան մեջ,
արմատը՝ հողում,
որ հանկարծ մերոնք չզնան
անտառ՝ ծառեր կտրելու:
Եվ զարդարեցի եղևնին թղթե
խաղալիքներով,
երկրագնդի նման կլորիկ՝
տարբեր զարդերով,
գրեթե տարբեր,
մեկի վրա ես դաշել եմ մի բառ,
մյուս գնդերը բաժանել թաղի
իմ ընկերներին,
որ իրենց ուզած բառերն էլ իրենք
գրեն ու բերեն,
ամեն մեկն իր սրտի ուզածը:
Եվ հաջորդ օրը
պատրաստ էր արդեն մեր տոնածառը:
Խաղազնդերը կախելուց հետո
կարդացինք միայն
գրությունները՝
շրջելով մեկ-մեկ,
և ինչ պարզեցինք. բոլորս, առանց
իրար ասելու, նույն բառն ենք գրել՝

«խաղաղություն»,
միայն Ասուն էր թուրքի հետ կռվում
նահատակված հոր միակ նկարը
պատճենել թղթին՝
հավատալով, որ Ձմեռ պապի հետ
հայրիկը կգա,
կիրականանա իր երագանքը:
Դեհ, ի՞նչ, մնում էր նամակ գրելի,
որ գիշերն իմ բարձի տակ մնար,
ու քնած պահիս գար Ձմեռ պապը,
վերցնել, կարդար.
«Շատ եմ աղաչում քեզ, Ձմեռ պապի,
այս անգամ դու ինձ նվեր չբերես,
դու Ասունցն տուն կգնաս մութով
և շատ նվերներ թողնես բարձի տակ,
երբ քնած լինի: Հեռացող տարվա
Ամանորին էր,
ինձ համար երբ դու նվեր ես բերել,
պատմեցի նրան, ինձ չհավատաց:
Ասաց՝ ինքն էլ նամակ էր գրել,
բայց ինչպե՞ս է, որ դու չես կարդացել...»:
Ոնց քնով անցա՝ չհնացա, հաջորդ
օրը վեր կացա, տեսա բարձի տակ

շատ նվերներ ու մի նամակ. «Ապրես,
Ասոյի համար դու հոգ ես տանում,
քո նվերներից դրել եմ նաեւ
նրա բարձի տակ»:
Տարիներ հետո, երբ ինքս արդեն
իմ տղաների բարձի տակ թաքուն
Ձմեռ պապիկի «բերած-նվիրած»
նվերներն էի դնում իմ ձեռքով,
նոր գլխի ընկա, որ նույն Ասոյի
խաղալիքներն էլ՝
ինձնց հետ մեկտեղ,
հայրս էր դնում՝ իմ նամակները
գիշերվա կեսին կարդալուց հետո:

Տարիքս հիմա Ձմեռ պապիկի
տարիքին է ճիշտ, մի այր եմ արդեն
ճերմակամորուս. «Արի, Ձմեռ պապ,
կարոտել եմ քեզ: Եվ պիտի ասեմ
հիմա էլ դարձյալ՝ նվեր չեմ ուզում,
ինձ բավական է հենց այն, Ձմեռ պապ,
որ կաս վերջապես,
ի դեմս քեզ՝ Մեկը,
որին կարող եմ թռնհիկներս պես

ես էլ ի սրտե զվարթ կանչել՝ «պապ»:

Իսկ ինչ մնում է մեր մանուկների
համար քո բերած խաղաղությանը,
թող որ այն լինի միշտ ու մշտական...

Բայց ընդհանրապես ասեմ, Ձմեռ պապ,
քեզ հուշեմ որպես
ինքս էլ մի պապ,
ուրիշ եմ հիմա երեխաները,
և Ձյունանուշը,
որքան էլ սիրում, նրանք չեն խաբվում:
Արի, Ձմեռ պապ ու մի հարվածով
քո կախարդական
հին գավազանի
երկրի երեսից սրբի չարագույժ
աղետներն ամեն,
պատերազմները,
նեռն ու չարը,
շառն ու շուռը,
վերադարձու հավատն աշխարհի,
լույսն Աստծո սուրբ ճանապարհի:

ԹՈՒՄԱՆՅԱՆՆԵՐԻ ԱՄԱՆՈՐՅԱ ՀՈՒՇԵՐԻՑ

Հովհաննես Թումանյանի ընտանիքում ամենայն մանրամասնություններով և խնամքով էին պատրաստվում բոլոր հյուրասիրություններին, անվանակոչության և մնացած բոլոր տոներին: Տոների և հյուրասիրության ավանդույթներն ու հուշերը մեզ են փոխանցվել նամակագրական հարուստ ֆոնդից ու Նվարդ Թումանյանի շնորհիվ փոխանցված հուշերից: «Նոր տարու առաջին օրը սովորականի նման առավոտվանից այցելուները, հյուրերը շատ էին: Այդ տարիներին հայրիկի ծանոթությունների շրջանը շատ էր մեծացել: Անվերջ այցելուներ, հյուրեր, գանազան հիմնարկներից դիմումներ, մասնավոր մարդկանց խնդիրներ այս կամ այն գործի համար: Այցելուներ ոչ միայն թիֆլիսից, այլև Կովկասի այլ քաղաքներից ու գավառներից, Ռուսաստանից և արտասահմանից (1916 թիվ, հունվարի 1):

դրանով հանդերձ Ամենայն հայոց բանաստեղծը երեխաների համար Ամանորը տոն է դարձրել: Դստեր՝ Նվարդ Թումանյանի հուշե-

մանյանի տանը: Մենք նրան ուղղակի իշխանուհի էինք ասում, այդպես էր ընդունված:

Հիշում եմ շքեղ խաղալիքներով, հարուստ, գույնզգույն մոմերով լուսավորված ու զարդարված մեծ տոնածառը, որ մենք տեսանք իշխանուհու տանը: Տոնածառի շուրջը խաղացինք «Մուկն ու կատուն», «Մեր ծագուկը փոսում նստած», «Երկու փոքրիկ մապաստակ» և այլն: Հիշում եմ զանազան գույնի փոքրիկ պարկերով նվերներ, ապա թեյասեղանը՝ մեծերի և փոքրերի համար առանձին: Ենթադրում եմ մոռանալ եփած շագանակը, որից գոլորշի էր բարձրանում: Առաջին անգամն էինք ուտում աղով եփած համեղ շագանակներ: Մինչև հիմա էլ, երբ եփած շագանակ եմ տեսնում, հիշում եմ իշխանուհու տան շքեղ տոնածառը և առաջին շագանակները:



Նվարդի հեղինակ՝ Քարոլին Ռոստամի

Նոր տարուն իշխանուհու տանը բարձր դասարանի աշակերտները ներկայացումներ էին տալիս. հիշում եմ «Խեչոյի թուզը»:

րում ընթերցում ենք. «Երբ փոքրիկ երեխաներ էինք, Նոր տարու առիթով մեզ համար տոնածառ էինք սարքում, բայց ոչ ամեն տարի. դա թանկ բավականություն էր: Մի քանի անգամ ենք սարքել: Առաջին անգամ տոնածառ տեսել ենք իշխանուհու Մարիամ Թու-

յանյանի տանը: Մենք նրան ուղղակի իշխանուհի էինք ասում, այդպես էր ընդունված: Հիշում եմ շքեղ խաղալիքներով, հարուստ, գույնզգույն մոմերով լուսավորված ու զարդարված մեծ տոնածառը, որ մենք տեսանք իշխանուհու տանը: Տոնածառի շուրջը խաղացինք «Մուկն ու կատուն», «Մեր ծագուկը փոսում նստած», «Երկու փոքրիկ մապաստակ» և այլն: Հիշում եմ զանազան գույնի փոքրիկ պարկերով նվերներ, ապա թեյասեղանը՝ մեծերի և փոքրերի համար առանձին: Ենթադրում եմ մոռանալ եփած շագանակը, որից գոլորշի էր բարձրանում: Առաջին անգամն էինք ուտում աղով եփած համեղ շագանակներ: Մինչև հիմա էլ, երբ եփած շագանակ եմ տեսնում, հիշում եմ իշխանուհու տան շքեղ տոնածառը և առաջին շագանակները:

կովնա, նախ շնորհավոր Ձեր Նոր տարին, և ապա ընդունեք հետին թվով իմ շնորհակալությունները մանկության օրերի գեղեցիկ հուշերի համար, որ կապված են Ձեր տան տոնածառի հետ: Նոր տարվա օրը Մուշեղի հետ միասին հիշում էինք մեր տեսած առաջին տոնածառը, Ձեր տունը, ձեր օրվա ստացած նվերները՝ մրգերի հետ, խաղերը, լուտոն, «Խեչոյի թուզը» և այլն և այլն: Մի խոսքով՝ մանկության օրերը:

«Նոր տարվա առիթով հայրիկը մեզ համար նվերներ էր գնում: Առավոտը վաղ մեզ կանչում էր իր սենյակը. մենք էլ հերթով, ըստ հասակի, կանգնում էինք ու սպասում «Ձմեռ պապի» նվերներին: Հայրիկը բարձի տակից հանում էր ու նվերները բաժանում:

Մի Նոր տարի հայրիկը մեզ համար գնել էր գունավոր պատկերազարդ, մեծադիր գրքեր. «Մոխրտղը», «Պատիկն ու ճատիկը», «Քնած գեղեցկուհին», «Կարմիր գլխարկը», «Կարենն ու մանչուկը», «Օբերոնի հրաշալի եղջյուրը»:

1905 թվականի հունվարի 1-ին, երբ դեռ ութը երեխա էինք, հայրիկը մեզ տոնածառի կանչեց մի փոքրիկ երգով՝ չորս տող ութ երեխայի անունից կազմված.

Մուշիկ, Նուշիկ, Անուշիկ, Արտիկ, Համիկ, Արփուշիկ, Աշխեն, Արեգ շուտ արեք, Տոնածառը զարդարեք...»:

Այս փոքրիկ բանաստեղծության մեջ, ինչպես տեսնում ենք, չկան թամարի և Սեդայի անունները մի շատ պարզ պատճառով. այդ տողերը գրվել են 1905 թվականի հունվարի 1-ին, երբ նրանք դեռ չէին ծնվել:

ՄՊԱՍԵՆ ԵՎ ՀԱՎԱՏԱՆԵ

ԹՈՒՄԱՆՅԱՆՆԵՐԻ ԱՄԱՆՈՐՅԱ ՀՈՒՇԵՐԻՑ

1 Իսկ Արտավազը Թումանյանի 1911 թվականի դեկտեմբերի 29-ին՝ բանտում գտնվող հորն ուղղված նամակներից մեկում ընթերցում ենք. «Անուկն ու Սեդիկը շատ շուտ-շուտ են պոկոտում օրացույցի թերթիկները, որ համ Նոր տարին շուտ գա, համ էլ՝ դու»:

Սովորաբար Թումանյանների տունը Ամանորին հյուրաշատ էր լինում: Երեխաները փոքրիկ բեմադրություններ էին անում: Մի անգամ էլ բեմադրություն կազմակերպեցին բանաստեղծի ավագ դստեր՝ Աշխենի տանը: Նվարդ Թումանյանի հուշերում ընթերցում ենք. «Նոր տարում մեծ քրոջս՝ Աշխենի տանը բեմադրեցինք հայրիկի «Ծաղիկների երգը»: Կազմակերպողը մեծ եղբայրս էր՝ Մուշեղը: Նա, որպես բնագետ, բոլոր դերակատարների համար գունավոր թղթերից ծաղիկների զգեստ էր պատրաստել՝ նարգիզ, շուշան, կակաչ և այլն: Դերերը բաժանել էր այսպես.

- Ջուրը- Յանիկն էր,
- Արևը-Արեգը,
- Աղջիկը-Սեդիկը,
- Արևածաղիկը-Անուկը,
- Շուշանը-Արփիկը,
- Կակաչը-Թամարը,
- Նարգիզը- Սաթիկը,
- Մանուշակը- Վարսիկը:

Սաթիկն ու Վարսիկը հորեղբորս աղջիկներն էին, որ ապրում էին մեր տանը: Ներկայացումը հաջող էր ստացվել, հայրիկը շատ հավանեց» (1914թ. հունվար):

Եթե ստացվել է այնպես, որ Ամանորին հյուր չէին ունենում և Նոր տարին դիմավորում էին առանց հյուրերի, ապա Ամենայն հայոց բանաստեղծը երեխաներին հավաքում էր իր շուրջը և կարդում էր հատվածներ համաշխարհային գրականությունից: Միշտ ընթեր-

ցանությունն ավարտում էր՝ կարծիք հայտնելով տվյալ գրողի ու նրա երկի մասին: Դա երեխաներին շատ էր օգնում ճանաչելու աշխարհը, նրանց մոտ ձևավորելու աշխարհայացք և համոզմունքներ:

1919 թվականի Նոր տարին, հավանաբար, ամենածանր տարին էր Թումանյանների ընտանիքի համար, որովհետև Արտիկի մասին լավ լուր չկար: Նվարդ Թումանյանի հունվարի մեկի գրառումը պատմում է բանաստեղծին այցի եկած մտավորականների և տանը իշխող տխուր տրամադրության մասին. «Առաջին այցելուն Սերգեյ Գորոդեցկին էր: Յետո եկան Տիգրան Յովհաննիսյանը, Ռոստոմը (Ստեփան Ջորյան), հայրիկի մանկության ընկերներից մեկը: Խոսում էինք Արտիկից: Ռոստոմը նոր էր վերադարձել Պարսկաստանից: Խոստացել էր տեղեկություններ բերել Արտիկի մասին, բայց, ըստ երևույթին, ոչ մի լավ լուր չէր բերել, քանի որ նրա գնալուց հետո հայրիկի տրամադրությունը ընկած էր:

Այդ օրը եկավ և Վրթանես Փափազյանը» (1919 թ. հունվարի 1):

1920 թվականի Նոր տարին դիմավորում են տանը, առանց հյուրերի: Յունվարի մեկին գալիս են Վրթանես Փափազյանը, Դերենիկ Դեմիրճյանը, Տիգրան Յովհաննիսյանը: Նվարդը գրում է. «Իմ սենյակում էինք հավաքվել. սենյակս տաք էր ու լավ, բուխարու կրակը առատ էր ու սիրուն: Սեղանի վրա էր Նիցշեի «Ջրադաշտը»: Յայրիկը Նիցշեին չէր սիրում. Նիցշեն դաժան է, իսկ համարը դաժան լինել չի կարող: Նա հիվանդոտ մեծություն է ու տկար հոգի»:

Նորից ոգևորված սկսեց խոսել Շեքսպիրից. «Շեքսպիր կարդալ, Շեքսպիր հասկանալ, կնշանակի մեծանալ. նա շատ է տարերային,

մեծ հանճար է: Լավագույններից պետք է կարդալ, սիրել Բայրոն, Գյոթե, Շիլլեր, Շեքսպիր...»:

Երեկոյան մենք՝ տնեցիներս, հավաքվեցինք հայրիկի սենյակում: Բայրոնի «Մանֆրեդը» կարդաց, նրա մեծախոսությունը կյանքի ունայնության մասին, հետո՝ Աստվածաշնչի «Բանք ժողովուրդին» բաժնի սկիզբը՝ «Ունայնություն ունայնություն», վերջում Բրեստեի եզրագրի պատմության գրքից կարդաց եզրագրիցների երգը կյանքի ունայնության մասին՝ «Ուրախ ապրիր, սրտովդ ապրիր, էս օրով ապրիր...» և համեմատեց Օմար Խայամի քառյակների հետ:

Յուրեր եկան և մեր ընթերցանությունն ընդհատվեց: Սերգեյ Գորոդեցկին էր իր կնոջ հետ. հետը բերել էր հայրիկի քառյակների ռուսերեն թարգմանությունը. մի քանիսը կարդաց, բայց այնքան էլ հաջող չէին, հայրիկը չհավանեց»,- կարդում ենք Նվարդի հուշերում:

Ամանորի գիշերները Թումանյանի ծանր հիվանդության հետ ծանրացան: 1923 թվականի հունվարի 1-ին նրան փոխադրեցին Մոսկվայի Օստրոմոնովի անվան հիվանդանոց, որտեղ և մնաց մինչև վերջ: Բեռլին գնալը հետաձգվեց և որոշեցին բուժել Մոսկվայում՝ ռենտգենյան ճառագայթներով: Յունվարի 5-ի գրառման մեջ Նվարդը գրում է. «Երեկոյան, թաթախման գիշերը միասին ընթերցեցինք, իրար կենաց խմբեցինք. հայրիկը հիշեց անցած երեկոները... Յետո թե՛ «Ջատկին երևի տանը կլինեմ, առողջ, երեխաների հետ սեղանի շուրջը միասին նստած...»: Ավա՛ր...

Այսօր Յովհաննես Թումանյանի թանգարանում պահվում են Թումանյանների ընտանիքին պատկանող տոնածառի երեք խա-

ղալիք՝ սերկևիլ, սալոր, դեղձ: Թանգարանում պահվում է նաև 1905 թվականի հունվարի 1-ին Ղազարոս Աղայանին նվիրած «Բանաստեղծություններ» ժողովածուն՝ ընծայագրով. «Իմ անգին Ալան ապրող՝ Ղ. Աղայանին», իսկ հաջորդ էջում այս երկտողը՝ «Անցավ հին տարին, կանցնի և նորը, Կանցնի՞ և արդյոք մեր անբախտ օրը»:

Այս երկտողը, հիրավի, շարունակում է ուղեկցել մեզ ամեն տարի, և այդպես էլ անբախտ օրը չի հեռանում մեզանից: Ամենայն հայոց բանաստեղծի «1 Յունվարի» բանաստեղծությունը ևս շատ ուղերձներ է պարունակում՝ գոտեպնդվելու, հավատը չկորցնելու և նորանալու առումով: Թումանյանի պես սպասե՛ք ու հավատանք «ոսկեվառ օրվան»:

ՆՈՐ ՏԱՐԻ

Դու էլ արի, Նորեկ տարի, Գըլխիս վերից Անցի, զընա, Ինչպես մի օր Թեթևասահ, Որ արևի Վառ ժրպիտով, Յողմ ու շանթի Մառն աղմուկով Անց է կենում Ծաղկի վրդից. Իսկ նա հովտում, Իր հուսալից Աչքը վերև, Փոքրիկ, չընչին, Ցնծում է կամ Մոտ է վերջին:— Ես էլ էնպես, Նորեկ տարի,— Մի խոտ, մի բույս, Ո՛չ ավելի:

Մի երկիր է

Տվել մեզ կյանք, Մի երկիրն է Դա հեղ իր տակ, Եվ գեղեցիկ, Փարթամ, հըլպարտ Մի խոտ, ծաղիկ, Կամ թե մի մարդ... Մենակ իրար Չենք հասկանում, Բայց ապրում ենք Մի սահմանում, Մի ճամփով էլ Պիտի գընանք, Կըրկին ծուկվենք Մի հող դառնանք, Անհետ, անտես Կորչենք, ինչպես Ձուկ հընչյուններ Մի մեծ երգի,— Լուկ հյուլեներ Տիեզերքի:

1894 թ.

1 ՅՈՒՆՎԱՐԻ

Շնորհավոր Նոր տարի... Թեև պիտի նա մարի Իմ վաստակած սրտի մեջ Դարձյալ մի հին իղձ կամ տենչ, Թեև պիտի ինձ բերի Միայն ծանրություն հոգսերի, Տան ծախքերի պրոգան, Եվ հալածի իմ մուգան... Բայց ինչքան էլ լինի վատ, Ես միշտ ունեմ ժայռ հավատ Դեպի կյանքն ու ապագան, Եվ հույս ունեմ, թե կըզան Սեր, սփոփանք, խնդություն... Այդ հույսով էլ անցկում Ես կանչում եմ՝ սըրտալի — Շնորհավոր Նոր տարի, Եվ մաղթում եմ ձեզ համար Նոր բաղդ, նոր օր ոսկեվառ:

1898 թ.

Պարասպեց «Յովհաննես Թումանյանի թանգարան» ՊՈՎԿ-ի փոփոխ Լուսինե ՂԱՐԱՍԱՆՅԱՆԸ

Անցկոխոխու ուղերձ

ՆՈՐ ՏԱՐԻՆ Ե ԲԱՆՈՒՄ ԺՈՂՈՎՐԴԻՍ ԴՈՒՈԸ...



խոցելի պարիսպ ու ժայռ, և քայլել ես առաջ, կտրել-անցել քանի՞ դարեր ու՝ հայ մնացել...

... Եվ՝ ՅՄՅ մնացել:

Էլի՛ կաս ու պիտի մնաս, ու՝ մնալու ես, իմ հայ՝ Ղարաբաղ, էլի՛ շատ ու դար ու ժամանակների վկան ու կերտողը պիտի լինես քո հայեցի շնչով, յուրահատուկ ոգով, էլի՛ հայ մանկանց առաջ պետք է գրնգոցով բացվեն քո հայ դպրանոցների դռները, էլի՛ ջուրն ու օղը քո հուր-հավիտյան լցված կլինեն հայոց քո բարբառով, քո նախնայաց շիրիմներից հար լույս է սփռվելու անգուգական սարուձորիդ, արծվանիստ վանք ու մատուռներիդ, քո՝ այսօր շատ տեղերում. Կատարո վանքի, Գոշավանքի՝ քո տարիքի կեսի կեսն անգամ չունեցող ազերուց գերված ու ապականված բարձունքներին, էլի՛ ու միշտ հայերեն են բացվելու առավոտները:

Եվ պիտի լինի, կա՛ ու պիտի լինի... Դու՛ իմ ազնիվ, արարչազորժ ժՈՂՈՎՈՒՐԴ, իմ ազնիվ հայ զավակս, քո արյան երակներում ո՛վ գիտի քո նախապապերից որ նախապապիդ արյունն է հոսում և առաջնորդում քեզ... Քո պապ Քաջն Վարդանի՞, Արշակ թագավորի՞, Գագիկ Յգորի՞, Աշխարհակալ Արտաշես արքայի՞, Սարգսրապատի՞, թե՞ քո նորօրյա հերոսների, որոնց արյունն է քո սրտում, ոտքերդ պահող քո հողում, քո շորերին, քո շուրթերին:

... Նրանք ելել-գոչում են, ինձ, քեզ, նրանց հորդորում, շշմում են բոլորիս և լուռ ու անխոս իրենց ՈՂՈՎ հրամայում.

...Պահիր երկիրն իմ, իմ որդոց որդի, Պահիր, փայլալի, անպարագիծ գրկով գրկիր ու պահիր ինձնով, մեր արյամբ ու քրտինքով քեզ հասած, քեզ ի պահ տրված այն անգին գանձը, որ կոչվում է Յայրենի Յող, որ կոչվում է Կենարար Աղբյուր, որ կոչվում է Յայի Կյանք ու Շունչ: Դա Յայրենիքն է մեր, իմ հայ եղբայր ու քույր, իմ զավակներ, իմ սյունեցի, իմ արցախցի, իմ վանեցի՝ ու կարսեցի, իմ Յայ արյունակից. ժամանակների ու դարերի հեռվից եկել ու դիմում, հարցնում են Ձեզ՝ Բոլորիդ.

...Պիտի հավերժվի՝ հայիս երակներում արյան հոսքը, պիտի հազարավոր հայ մանուկներ ծնվեն ու հառնեն, այդ մի կաթիլ, բայց շատ թանկ կաթիլ արյունից, պիտի հավերժվեն հայն ու Յայաստան, պիտի ապրի՝ Արցախս հայոց:

...Եվ դուք կասեք, բոլորդ կասեք. Այո՛, պիտի՛ ծնվեն, պիտի՛ հառնեն հազար հազարը Յայաստան երկրում, Յայոց Արցախում...

... Ժամն օրհասական էր այնօր, օրհասական է և այսօր: Արյան ծարավ շնագայլ-բորենիների վնգստոցն ու կաղկանձը հասնելով Յայոց Դեանը՝ կլանեց բարեշեն Անի ու Վանը, խժռեց Սատունն ու Մուշը ու չհագեցավ, չկշտացավ, ոռնալով, վնգստալով, շնագայլի վարքականումով, վայրենու բարքով հասավ Յայոց Արևելից Աշխարհ՝ հայաշունչ ու հայակերտ Ուտիք աշխարհ. Գետաշեն, Շահունյան ու զորավարների

չեն երկիր, վայրաբար իր ոռնոցով, գենքով, ծեծուզանով հարկադրեց իրենց օջախների հազարամյա ծածկազարմ տերերին դատարկել, սեփական ձեռքերով բնավեր անել, թողնել, հեռանալ...

... Էլի՛ չհագեցավ, էլի՛ չլռեց, ավելի շատ արյան ծարավով ճեղքեց մեր Յայրենի Արցախս տան Մեծ Դարպասը և մտավ ներս, մտավ, պղծեց, սպանեց, լափեց... Ժամիքը սրած ազերի-թուրքի անհագ ախորժակ՝ մինչև այսօր... Եվ մեր մեծ Յայրենիքի վերջին Սուրբ մատուցքը զոհասեղանին է, իսկ ժողովուրդս՝ գերի ու պատանդ... հենց այսօր, հենց հիմա, հենց այս ժամին:

Ձեր Նախապապն եմ, հեռվից եկա, որ ելնեմ, գոչեմ ու աղաղակեմ.

- Ո՛ւր եք, է՛յ-հե՛յ...

... Քաջն Վարդանի, Գայլ Վահանի, Ավոյի ոգի. Նոր զորեղ ուժով հառնիր ցեղիս, ժողովրդիս հոգում, հրամանդ տուր, իմաստուն հրամանդ, Գարեգին Նժդեհ, Ջորավար Անդրանիկ, ձեր ոգով միշտ արթուն պահեք Յայ զավակիս Գոյապայքարի մարտական ոգին, նորօրյա Յերուսաղեմ, լավագույնների մեջ լավագույնը ժողովրդիս, Ազգիս՝ Յավերժի ճամփորդ, բոլոր դարերի խիզախ տղաներ, ընկած Յերուսաղեմ, քայլող Յերուսաղեմ, Երգիրը չթողած, Երգում անմահացած անգուգական, անկրկնելի Չաուչի Ոգի, նորեն ու նոր ուժով արթնացրեք Յայի Կամքի ուժն ու հավաքական ե՛ս ըր:

ԱՄԱՆՈՐՅԱ ԱՎԱՆԴՈՒՅՐՁՆԵՐ

ԱՄԱՆՈՒՄ ՆՈՐ ՏԱՐՎԱՆ «ՏԱՐ ԳՐԱԽ» ԷԻՆՔ ԱՄՈՒՄ

Ս.թ. հոկտեմբերի 11-12-ը Երևանում անցկացվել է Միջազգային էպոսագիտական 6-րդ գիտաժողովը՝ նվիրված «Ասանա Շներ» էպոսի ուսումնասիրության 150-ամյակին, որտեղ «Ասանա Շներ» էպոսի վերջին պատմողը Սասունում. Տեսանյութի դիտում և մեկնաբանում» թեմայով զեկուցում է ունեցել Բեսսե Քարաբը (Թուրքիա): Գիտաժողովին ներկա՝ «Լուսարար»-ի թղթակից Սուրայա Ղազարյանի խնդրանքով Հովհաննես Թումանյանի բանագրարի տնօրեն Լուսինե Ղարախանյանն առաջարկել է զեկուցողին հոդվածով հանդես գալ «Լուսարար»-ում: Հաշվի առնելով առաջիկա տոնը՝ Ամանորը, Բեսսե Քարաբը նպատակահարմար է գտել տրամադրել ներքինիշյալ հոդվածը, որը ժամանակին տպագրվել է Թուրքիայում լույս տեսնող «Ակոս» թերթում:



բառում Տար գլուխ, «Տարեմուտ», «Նոր տարի» անվանումներով: Իսկ հայերի հեթանոսական շրջանի Նոր տարվա տոնի անվանումը «Նավասարդ» է:

Նավասարդի տոնակատարություն

Հայերը հավատում էին, որ Նավասարդի տոնակատարություններն սկսվել են Նոյի ժամանակ: Համաձայն այս հավատալիքի՝ Նավասարդը այն օրն է, երբ Նոյի տապանի՝ Արարատի վրա իջնելուց հետո մարդիկ և բույր կենդանի էակները տոնեցին ջրհեղեղից փրկվելը: Այն օրը, երբ բոլոր կենդանի էակները ոտք են դրել հողին, մարդկության համար մի նոր սկիզբ է եղել: Այս պատճառով մարդիկ սկսել են նոր կյանքի սկիզբ հանդիսացած այդ օրը տոնել որպես Նոր տարվա առաջին օր:

Մեծ ուրախությամբ տոնվող Նավասարդի ժամանակ տաճարները երփներանգ ծաղիկներով և կարմիր վարդերով զարդարելու պատճառով Նավասարդի մյուս անվանումն է դարձել Վարդավառը: Այս տոնի ժամանակ, երբ օրերով շարունակվում էին մրցույթները, ցուցադրությունները, մարդիկ, աղավաղներ թոցներով, մեկը մյուսի վրա ջուր լցնելով, տոնում էին ջրհեղեղից փրկվելը: Որոշ աղբյուրներ հայտնում են, որ Նավասարդը փոխակերպվել է օգոստոսին մշվող Մարիամ Աստվածածնի տոնի:

Նավասարդին մշվող Նոր տարվա տոնակատարությունները ժամանակի ընթացքում փոխադրվել են հույների տոնած հունվարի 1-ին (հետագայում պատահել է նաև, որ տոնել են տարբեր օրերի): Քրիստոնեության ընդունումով հայ ժողովրդի մեջ դեռևս շարունակվող Նավասարդի տոնակատարությունների հինգ մեծ տոներից մեկը համապատասխանեցվել է Հիսուս Քրիստոսի փոխակերպման և պայծառակերպության տոնին:

Այն հանգամանքը, որ Վարդավառի տոնակատարությունների ժամանակ վարդերին մեծ տեղ են տալիս (եկեղեցականները եկեղեցու պատարագի ժամանակ ժողովրդի վրա օրհնված վարդեր են մատուցում) և պատարագից հետո մարդիկ իրար ջրում են եկեղեցու այգում և տներում, ցույց է տալիս, որ քրիստոնեության ընդունումով Վարդավառը ձեռք է բերել նոր իմաստ, սակայն դրա հետ մեկտեղ պահպանվել է նաև իր նախկին իմաստը: Այս առանձնահատկու-

թյամբ Վարդավառ տոնը (հավատում են, որ տոնել են ջրհեղեղից փրկվելը) աշխարհում դեռևս տոնվող ամենահին տոներից մեկն է համարվում: (Տես Թեոդիկ, Ամեմույն տարեցույցը-1907, Վահան վարդապետ Տեր Միսնայան, Անգիր դպրություններ և հին սովորություններ, 1904):

Դեպի անցյալ կատարած այս կարճ ուղևորությունից հետո, եթե կցանկանաք, այժմ անդրադառնա՞նք Սասունում մեր պանդուխտներիս նշած «Տար գլուխ»-ի տոնակատարություններին:

Սասունում Տար գլուխը լրիվ ուրիշ էր

Այնտեղ անհրաժեշտ էր, որ ամեն ինչ ինքներս անենք. ձմռան ամիսների համար նախատեսված ուտելիքից մինչև վառելափայտ, առօրյա մեր հացից մինչև խմելու ջուր՝ մեր կարիքները ինքներս էինք հոգում: Այս պատճառով եթե Սասունում ծնված լինեք, մանկությունից մինչև վերջին շունչը ձեզ սպասվում է աշխատանքով հագեցած մի կյանք:

Փոքր տարիքից այս կյանքին սովոր սասունցի երեխաները, ի տարբերություն աշխարհի իրենց տարեկիցների, չեն սպասում, որ Տար գլուխին Ձմեռ պապիկը ծխելույզով մտնելով վառարանի մոտ կախված գուլպաների մեջ՝ Նոր տարվա նվերներ թողնի, այլ ծայրերին պարան կապած գուլպաներով կտուրից կտուր շրջելով՝ իրենք էին ծխելույզներից հավաքում իրենց նվերները:

Եթե մտածեցիք, որ «դռնեղուռ շրջելու» փոխարեն սխալմամբ օգտագործեցի «կտուրից կտուր շրջել» արտահայտությունը կամ եթե այն կարծիքին եք, որ նվերները կտուրի վրա՝ ծխելույզի հետևում, քաջարած էին, պետք է ասեմ, որ սխալվում եք, որովհետև սասունցի երեխաները կտուրների ծխելույզի անցքով ներքև իջնելով՝ գուլպաներով հավաքում էին իրենց նվերները, իսկ նրանք, ովքեր գուլպա չէին գտնում, պարկ կամ գլխարկ էին օգտագործում: Կտուրի ծխելույզի անցքի և վառարանի միջև խողովակի ձևով մեխանիզմ չլիներու պատճառով, երեխաները այս գործողության ընթացքում որևէ դժվարություն չէին ունենում:

Եթե «գուլպա» են ասում, նպատակադրված բանբան կամ մեյլոնե գուլպաները, որոնք հագնում են քաղաքում, և որոնք կոշիկների մեջ անհանգստություն չեն

պատճառում: Խոսքը գնում է այն գուլպաների մասին, որոնք տրեխների մեջ ցուրտ ձմռանից պաշտպանում են ձեր ոտքերը գյուղական միջավայրում, որոնք բրդից գործել են ձեր տատիկները և ֆիլմերում պատկերված Նոր տարվա տեսարաններում բուխարիների վերևում կախում են՝ որպես նոր տարվա զարդարանք:

Գալով նրան, թե երեխաներն ինչպես էին կարողանում բարձրանալ տանիք... Ընդհանրապես լեռների լանջերին կառուցված մեր տները, եթե դիմացից 2-3 հարկանի էին երևում, քանի որ հողակտորը թեք էր, հետևի մասի երկարությունը մարդու հասակը չէր անցնում: Մեր տների տանիքները հարթ հող էր, սրա շնորհիվ երեխաները առանց դժվարանալու կտուրից կտուր անցնելով՝ խաղիկներ էին երգում՝

Այսօր կաղ է
Առտուն կաղանդ է
Ձեր մեռելոցի հոգուն
Տվեք ու գա
Տան տիկին, տան տիկին
Ելի գնա մարաքն ի վար
Կարճ բռնե, երկար կտրե
Կամցուք, որ մատիկտ չկտրես
Ով որ տա, շեն մնա:

Վերոնշյալ ժողովրդական խաղիկը մեկն է եղիմուն երգվող նոր տարվա խաղիկներից: Հավանաբար Սասունում էլ Տար գլուխին հայերեն խաղիկներ են կատարել, սակայն ցավոք Նոր տարվա խաղիկները և կիսել են անհետ կորած երգերի, օրորոցայինների ճակատագիրը: Մենք էլ այս բացը կաշխատենք լրացնել գյուղում կատարվող հարևան լեզուներում առկա խաղիկներով, այսինքն՝ դեռևս շրջանում կատարվող քրդերեն խաղիկներով:

Բաթմանի և Սասունի գյուղերում, չնայած դեռևս ընդհանուր առմամբ մայրենի լեզուն արաբերենն է, ինչպես Նոր տարվա, այնպես էլ հարսանիքների, տոների ժամանակ քրդերեն երգեր են կատարում: Չնայած առկա հավատքի տարբերություններին՝ շրջանում ապրող գրեթե բոլոր ժողովուրդները Նոր տարին տոնում են, սրա վերաբերյալ գնահատականները թողնելով մասնագետներին՝ գյուղից գյուղ փոքրիկ տարբերությունները ցույց տալու հետ մեկտեղ մայրենի Նոր տարվա խաղիկի քրդերեն տարբերակին, որը իմաստի տեսանկյունից ամեն լեզվում գրեթե նույնն է:



ՆՈՐ ՏԱՐԻՆ Ե ԲԱՆՈՒՄ ԺՈՂՈՎՐԴԻՍ ԳՈՒՈՐ...

... Չե՞ք տեսնում, մեր անտառներն ու ձորերը լցվել են անօրեներով, շնագայլերով...
Եվ որտե՞ղ է քնած առյուծը հայի, զարկե՞ք ու զարկե՞ք զանգեր, կոչնակներ, թող զիլ ծայն հանեն, ցավի ու դավի թմբիկից հանեն քնած Դավիթին, Հերոս Դավիթին, Առյուծածև Սիեթին, Առյուծին Հայոց...
Հոգիս ցավում, տրտմած է հոգիս...
Այս ինչքան՝ շատ ենք կորցրել հայրենի հողից:
Ավել-առավել այս ի՞նչն էք սիրել, այս ի՞նչն էք պաշտել Հողից առավել, մեզ ծնած-սնած օջախից, տնից ավել-առավել այս ի՞նչն էք պաշտել: Մեր այն Մեծ Տնից թողել եք մի պատ, մի սյուն ու մի վեճ, վրան՝ Ազդարար. «Ազգերի շարքում, Դու՝ Ազգ հիմնավորը, Ով Հայ հիմնավորը, Ելի՛ր, կանգ մի՛ առ, Քո ճանապարհը մի՛

տուր ուրիշին: Ապրե՛լ ես ուզում, Քո ազգանունը պահե՛լ ես ուզում. երկնչել չկա, ելի՛ր ու քայլի՛ր, որ շատ տարիներ ու էլի դարեր, խառնագույն մարդոց դաժան աշխարհում Քո՛ տեղն ունենաս, գույնդ չփոխվի՛, ԱՆՈՒՄ Կարի՛»:
... Ու ժԱՄՆ է հասել:
Դարերի խորքում հոգնած, ծերացած, տարիքս՝ հազար, բայց հոգիս արթուն, շունչս միշտ Ձեզ հետ ու Ձեզ պահապան, տառապյալ ազգիս կանչով եմ եկել, եկա, որ գոչեմ. բոլոր դարերի Հայոց քաջերի անունից, եկա նրանց անունից, որ Հայոց բերդ ու ամրոց են շինել, երկիր են պահել, խառնվել Մայր հողին ու դարձել են հող, ո՛չ սովորական, այլ՝ ՀԱՅՐԵՆԻ՝ ՀՈՂ, որ Քո՛ ԱՆՈՒՄՆ է, հայի՛դ ամուրը՝ պայքարի վաստակ, արյունով դաջված: Եկել եմ ասեմ, որ քո անունը դու պատվով կրես, որ քո օջախը

դու ամուր պահես և կրկին-կրկին ու նորեն անգամ լսեմ ուխտը քո.
«Դու՛ իմ Քա՛ջ նախնի, դու՛ իմ նախապապ և դու՛ իմ քա՛ջ պապ, ուխտ ունե՛մ արած և հավատարիմ ուխտիս զորավոր՝ գործել ամեն ժամ: Ինչ էլ որ լինի, ես չեմ թողնելու մեր Օճորը տան, մեր Օճորըը հին, ուր համուհոտն է ինձ բաժին հասած իմ ազգանունի, իմ Ես-ի, Գոյ-ի և իմ ԱՆՈՒՄ: Ուր համուհոտն է իմ Սուրբ մայրիկի, Սուրբ Նանեի»:
...Նավասարդ է, Նոր տարի: Հասել ենք մեզնից, մեր ազգի տարիքից, շա՛տ փոքր, բայց մի Մեծ թվականի, մեծ, շատ Մեծ թվականի, որի անունն է՝ 2025:
Դու՛՛ մեր Նոր, գալի՛ք Նավասարդ. լավ լուրերով կբացես մեր հին ու նոր Հայոց Տան, Արցախատան դռները:

Իմաստում Ազգ ու երկիրն իմ արժանի են, որ միշտ հայրենները հնչեն ու կարկաչեն մեր մաքրամաքուր, մեր սուրբ Հայրենիքում: Որ Հայաստան երկրում, Արցախ աշխարհում գործանա՞ ու բարգավաճի՞ իմ արմատն ու ծառը, որ Այբ-ն ու Բեն-ը հավերժորեն հնչեն իմ հայաշունչ, իմ անգին Հայոց Հողում, որ ապրի՛ ու բարձրանա՞ Չավակն Իմ՝ Արցախ: Եկել եմ ասեմ, բայց չգնամ ու մնամ, միշտ մնամ Ձեզ հետ, բայց ո՛չ ուրիշ տեղ, միայն մեր տանը: Մենք պիտի՛ ապրենք միայն մեր տանը և ուխտով՝ ապրենք՝ առ Հայրենիք:
Ու՛ժ և գործություն իմ ժողովրդին, իմ Հայաստանին, ապրելու և պայքարելու Դրոշն ուսած իմ Ղարաբաղին:

**Լուսինե ՍԱՐԻՐՈՍՅԱՆ
Ստեփանակերտի Աշոտ Դուլյանի
անվան հ. 2 դպրոցի նախկին տնօրեն**

«ԼՈՒՍԱՅԳ»-Ի ՇԵՔԵՐՈՎ

«Լուսայգ» մանկապատանեկան ամսաթերթն ավելի քան մեկուկես տասնամյակ արցախցի դպրոցականների հաճելի գրուցակիցն էր, նրանց վստահելի ընկերն ու խորհրդատուն: Այսօր հայ մեդիադաշտում մասնագիտական գործունեություն ծավալող ոչ քիչ թվով ար-

ցախցի լրագրողներ, գրականության բնագավառի երիտասարդ ներկայացուցիչներ իրենց առաջին ստեղծագործական քայլերն սկսել են «Լուսայգ»-ից: Թերթը հասանելի էր ու կարողում էին Արցախի Հանրապետության բոլոր դպրոցներում, իսկ հիմնական թղթակիցները հենց

դպրոցականներն էին: Ավա՞ղ, չկարողացանք բռնագողթի ժամանակ Հայաստան տեղափոխել «Լուսայգ»-ի տպագիր արխիվը, համակարգչային շարվածքով պատրաստված հազարավոր նյութերն ու լուսանկարներն էլ ցավալիորեն խմբագրության տեխ-

նիկական գույքի հետ մնացել են թշնամական գերության մեջ: Այնուամենայնիվ մեզ հաջողվել է հայթայթել ամանորյա թեմաներով որոշ թղթակցություններ ու լուսանկարներ, որոնք ժամանակին տպագրվել են «Լուսայգ»-ում: Դրանք վերահրապարակելով «Լու-

սարար»-ի տարեմուտյան համալուծում՝ փորձել ենք հեղինակներին, և ոչ միայն նրանց, հայրենաբաղձական հաճելի զգացումներ պարզել՝ հավատալով, որ անպայման կվերադառնան Արցախ ու միասին կերտենք մեր լուսավոր ապագան:



ՀՈՒՅՍԻՑ ՈՒ ԼՈՒՅՍԻՑ ԾՆՎԱԾ ՅԵՔԻՎԱԹ

Ամեն մի սկիզբ օրհնանքի խոսք է բարի, Որ վերջ լինի հին ցավերին ու ավարտ... Ուրեմն թող օրհնյալ լինի Նոր տարին, Լինի հույսից, սիրուց հյուսված մի հեքիաթ...

փան ավել, շխշխշկացնելով այս ու այն կողմ են շարժվում՝ բարձրաձայն գոչելով. «Չարը ընդի... բարին ըստի... չարը ընդի, բարին ըստի: Նոր տարին պարավ կյա»:

դարձյալ բախտանշանն է: Ո՞վ կլինի հերթական ամենաերջանիկը: Պատասխանը չի ուշանում: Առաջ է գալիս նա և Կաղանդ պապից ստանում նվերը: Ավանդույթից ելնելով՝

օր անակնկալ է մատուցում իր բնակիչներին: Դրանք ուղեկցվում են երգ ու պարով, հեքիաթների բեմականացումով, մուլտիերուսների, խամաճիկների խաղով...

Տոնահանդես է հնի ու նորի: Դժվար է հրաժեշտ տալ անցնող տարուն, սակայն պետք չէ ավստանքով ճանապարհել. այն որպես անցյալի փորձ՝ կուղեկցի մեզ նոր տարուն:



Սիրելի «Լուսայգ»-ցիներ, երևի կռահեցիք, որ մենք փորձեցինք ներկայացնել Ստեփանակերտի Շ. Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնում կազմակերպված «Լուսների քաղաք» ամանորյա միջոցառումների պատկերը, որը Արցախի Հանրապետության մշակույթի, սպորտի և զբոսաշրջության նախարարության օժանդակությամբ կազմակերպել էր Կենտրոնի տնօրինությունը՝ Արմեն Հովսեփյանի գլխավորությամբ: Համոզված ենք, որ մանատիպ միջոցառումներ Արցախի բոլոր բնակավայրերում են եղել՝ թող որ տարբեր անվանումներով: Ամենուրեք այն կայացել է տեղի բնակիչների երևակայությամբ, բայց ընդ-

հայերիս մոտ ուղեկցվում է նորոգելու գործողություններով՝ նոր թխած հաց, նոր բերված ջուր, նոր հագուստ... Թխվում էր «Տարի հաց», «Կրկենի», «Դովլաթ կրկենի», «Փուռնիկ» և այլ անվանումներով հայտնի ծիսական հացը, որը կարող էր լինել գաթա, բաղարջ՝ ձվածեղ, կլոր: Կաղանդի փառքն ու փայլը գաթան էր, որի մեջ դրված էր լինում բախտանշանը:

հայկական տոնական սեղաններին դրվել են զանազան մրգեր, չրեղեն, ընդեղեն: Մրգերի որոշ տեսակներ հատուկ խորհուրդ ունեն,

Ամանորը հրաշալի տոն է՝ կապված հույսերի ու բարի ցանկությունների իրականացման հետ... Մեծ ու փոքր սպասում ենք ամանորյա հրաշքին...

Ամանորյա հանդերձներ է հագել Լուսների քաղաքը: Նրա անբաժանելի մաս և ցանկալի հյուր է Ձմեռ պապը՝ բարի հրաշագործը, որին էլ վերապահվում է տոնածառի լույսերը վառելու իրավունքն ու պատիվը:

Մարդիկ երազանք են պահում՝ ամեն մեկը մտածելով վաղվա լուսավոր ապագայի մասին: Լուսապայծառ տոնածառի շուրջը Ձմեռ պապի և Չյունանուշի հետ բոլորը պար են բռնում: Ձմեռ պապն իր շուրջն է հավաքում մանուկներին, հարցեր է տալիս նրանց, նվերներ բաժանում:

Նոր տարին դիմավորելը խոր արմատներ ունի: Ամանորին հայերիս տոնական սեղանները միշտ առատ են եղել: Հատիկավոր կերակրատեսակներն ամանորյա սեղանի զարդն են կազմել: Թոնրի մեջ պատրաստված ամանորյա քաշիկան կամ նավասարդի հարիսան չի հարվում, չի խառնվում, որ տարին խառնակ չլինի, պատերազմներ չլինեն: Լուսների քաղաքում հյուրասիրությունն էլ անպակաս է: Արցախյան կուրկուտը բոլորն են վայելում...

Էլ ի՞նչ տոն՝ առանց այսի: Ավանդույթի համաձայն՝ 7 երեխա ընկույզի կեղևից պատրաստված չարխափաններով, այսան՝ ձեռքին չարխա-

Այան թռռիկներով պտտվում է և ասում. «Դովլաթ, սարում ըս, ծյորում ըս, տոն եկ...»: Թոնուհիները կրկնում են այսի խոսքերը, բաժանում գաթան: Բոլորն անուշ են անում՝ ակնկալելով իրենց բաժին գաթայում տեսնել դովլաթը՝ բախտանշանը: Վերջապես բացահայտվում է երջանիկ գաթայի տերը: Նա բոլորի ուշադրության կենտրոնում է: Կաղանդ պապը նրան նվեր է մատուցում: Իսկ նա բախտանշանը պետք է պահի ամբողջ տարի:

Անակնկալները շարունակվում են հաջորդ օրերին էլ: Ամանորյա սեղանի զարդն է նաև աղանձը: Այս անգամ որպես հյուրասիրություն հրամցվում է փոքրիկ տոպրակներով աղանձը: Մեկի մեջ



առանձնահատուկ տեղ են զբաղեցնում խնձորն ու նուռը: Խնձորը պտղաբերության, նուռը՝ միասնության խորհրդանիշ է: Լուսների քաղաքի բնակիչներին խնձոր են բաժանում: Դրանցից մեկուն էլ կա բախտանշան: Ո՞ւմ բաժին կընկնի բախտի խնձորը... Երջանիկ տիրոջը նվեր է սպասվում:



Լուսների քաղաքն ամեն

հանրականը թերևս լույսն է: Առանձնակի ջերմություն կա այդ լույսերի մեջ՝ ներկան իմատավորող և վաղվա հանդեպ հույսեր ներարկող:

Թող Նոր տարին իր հետ բերի նոր երազանքներ, թող ամեն հայի օջախում մի նոր լույս բացվի:

Ս. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀԱՆԳՐՎԱՆ

ԼՈՒՍԱՅԳ



ՊՎՊ ՈՒ ԾՈՌ



նել Նոր տարվան»: Ես էլ երեխայացա ու ծոռնուհուս երկտողը «գողացա»։ «Արի՛, արի՛, Նոր տարի, անուշ տարի, շուտ արի, Դու անուշ ես ու բարի, Մուկի տարի, լավ տարի»։

Ծոռնուհուս համաձայնությամբ այս երկտողը քառատող դարձրի։

Արի՛, արի՛, Նոր տարի, Անուշ տարի, լավ տարի, Դու անուշ ես ու բարի, Մուկի տարի, շուտ արի։



Յավանցեք։ Եվ միասին շարունակում ենք։

Տատը՝ Մարիետան, վեց թռնիկ ունի՝ երկու աղջիկ, չորս տղա։ Եվ գրեցինք։

Վեց թռնիկներ հավաքվել,

Տատիկի մոտ ենք եկել, Ես, Քնարը և չորս եղբայրներ։ Տատիկից ստացանք գեղեցիկ քուրքեր։

Սամվելիկը մեծ պապի պես Չմեռ պապի քուրք է հագել, Փոքրիկ Քնարը Չյունանուշիկ է, տե՛ս, Իսկ Յայկ եղբայրը՝ խորամանկ աղվես, Ես էլ նապաստակ եմ երկարականջ, Իսկ Ռուբենչիկն ու Նարեկը՝ փոքրիկ մկնիկներ։

Այդպես տատիկի վեց թռններ հավաքվել, Նոր տարվա տոնածառն ենք զարդարել։

Ամեն մեկս իր քուրքը հագած, Տոնածառի շուրջը շրջան կազմած, Սպասում ենք քեզ ամեն օր, Մեր սիրելի Ամանոր։

Դե շուտ արի, Նոր տարի, Մեր երկրին բեր բերք ու բարիք, Իսկ աշխարհն էլ թող խաղաղ լինի, Կյանքը ծաղկազարդ մի դրախտ լինի։

Օլեսյա ՇԱՅՆԱԶԱՐՈՎԱ
2-րդ դասարան
Համահեղինակ՝ Մեծ պապ

ՆԱՄԱԿ ՁՄԵՌ ՊԱՊԻՆ



Սիրելի՛ Չմեռ պապ, ես ուզում եմ, որ գաս Քո հրաշք կառքով, պատվես հայրենիքիս սարերով և բարձրից, շա՛տ բարձրից Քո կախարդական գավազանով խաղաղություն հաստատես մեր հայրենի Արցախում։

Ես ուզում եմ, որ Նոր տարվա գիշերն այցելես բոլոր մանուկներին և իրենց ուզած նվերները տաս։

Հա՛, Չմեռ պապ, խնդրում եմ, որ ինձ էլ այցելես, իսկ նվերը... նվերը թող ինձ համար լինի բարի անակնկալ։

Դե շուտ արի, անհամբեր սպասում եմ։

ՀԱՅՐՍ

Մեր սեզ լեռների պես
Հպարտ է ու վեհ հայրս,
Հզոր է ու հաղթական՝
Ինչպես քաջի վահան։

Հայրենիքիս զինվորն է հայրս,
Արցախի պաշտպանն է հայրս։

Մարիամ ՊՈՂՈՍՅԱՆ
Սպեֆ. Ե. Չարենցի անվան հ. 7
հիմն. դպրոցի 4-րդ «բ» դասարանի
աշակերտուհի

ՉՈՐԱՆԱՆՔ ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹՈՎ

Ամանորի նախաշնչին մեր դասղեկ Նարինե Բաբայանի գլխավորությամբ դասարանով մասնակցեցինք «Մենք

տարմամբ ըմբռնեցինք ազգագրական, ժողովրդական, հայրենասիրական երգեր։ Դրանք մեծ ոգևորություն առաջացրին մեր մեջ և Նոր տարի մուտք գործեցինք ազգային զգացումներով ամրապնդված։ Հասկա-

երգերը։

Շնորհակալություն Ստեփանակերտի քաղաքապետ Դավիթ Սարգսյանին, որն ապահովել է մեզ համար համերգի անվճար տոմսեր և ժողովրդական արտիստուհի Նաիրուհի Ալավերդյանին՝ այդ ամենը կազմակերպելու համար։



ենք մեր սարերը՝ ազգագրական երգի-պարի համույթի (գեղարվեստական դեկավար՝ արվեստի վաստակավոր գործիչ Գարի Ավանեսյան, երգի մասի դեկավար՝ վաստակավոր արտիստ Վիտայի Դազարյան, համույթի տնօրեն՝ մշակույթի վաստակավոր գործիչ Ալավա Ապրեսյան) համերգին և նրա կա-

ցանք, որ ռաբիսը տեղ չպիտի ունենա մեր կյանքում, մեր ունկերին պետք է այսօր լինի մի այն մաքուր երաժշտությունը, իսկ մեր հոգին պետք է սնեն ազգային ակունքներից հոսող

Ստեփանակերտի
Ա. Դուլյանի անվան
հ. 2 հիմն. դպրոցի 5-րդ
«դ» դասարան

ԱՆԻ ՍՐԱՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻԻՑ



- Մի օր չորս տարեկան Տիգրանը ասում է դաստիարակին,

- Տիգրան Նուրե, վաղը անձրև է գալու, հայրս է ասել։

Տիգրան Նուրեն ասում է.

- Տիգրան ջան, կարո դ է՞ հայրդ մետիոցնոր ա։

Փոքրիկ Անիի տուն եկավ Չմեռ պապը, որին հրավիրել էին մայրիկն ու հայրիկը։ Չմեռ պապը մի պատանի էր, որն իր բարակ ձայնով փորձում էր խաղալ իր կերպարը։ Անին երկար զննելուց հետո ասաց.

- Սա անտառի Չմեռ պապ չի։ Ինձ դուր չեկավ։

Քնելուց առաջ գրեթե ամեն օր Անին մայրիկին հարցնում է.

- Ես այսօր ինձ լա՞վ եմ պահել։

- Այո,- ասում է մայրիկը։

- Ո՞նց թե՛ այո։ Մոռացել ե՞ս, որ դու ինձ ասել ես՝ չի կարելի համոզելի շրջագետնոր տանը հագնել, իսկ ես հագել եմ։ Դառավ խելոք ե՞մ։

Մայրիկը հարցրեց Անիին, թե ինչ է ուզում Չմեռ պապիկից։ Նա ասաց.

- Հեքիաթների մեծ գիրք, շրջագետն ու տիկնիկ։

Իսկ քիչ հետո շարունակեց.

- Մամ, բայց մենք Չմեռ պապիկին նեղություն ենք տալիս։ Տիգրանը դու կամ պապան կառնես, իսկ նա մեղք է, թող բերի միայն շրջագետն ու գիրք։

Մայրիկը մի օր ջղայնանում է Անիի վրա և շատ ժամանակ չանցած ասում նրան՝ բախե։ Անին զարմացած հայացքը ուղղում է մորը և ասում.

- Բախե՞ս... մամ, բա դու ինձ վրա զայրացած չե՞ս, շատ արագ մոռացել ես։

Մայրիկն ասում է Անիին.

- Չմեռ պապն արդեն զանգել ու ասել է, որ քո նվերներն առել է և կբերի։

- Շատ եմ խնդրում ասա նրան, որ որքան էլ ուշ լինի, թող արթնացնի ինձ, և ինքը տա նվերը։ Հիմա չե՞ս կարող զանգել, որ ես խնդրեմ նրան։

- Չէ, ինքը անհասանելի է և միայն իրեն հարմար տեղերից է զանգում։

- Լավ, ուրեմն չեմ քնի և կսպասեմ մինչև կմտնի մեր տուն։

Մի օր քնելուց առաջ Անին ասում է մայրիկին.

- Այսօր լավ օր է՞ր։

Մայրիկն ասում է՝ այո և սկսում բացատրել, որ իսկապես ամեն ինչ լավ էր։ Անին հանդիմանում է մայրիկին.

- Ո՞նց եր լավ։ Լավ է՞ր, որ ես աթոռից ընկել եմ ցած, իսկ դու դա չես հիշում։

- Չմեռ պապը դաստիարակի համար ի՞նչ բերի,- հարցնում է մայրիկը Անիին։

- Ոչ մի բան։ Չմեռ պապը միայն երեխաներին է նվերներ բերում։

Մայրիկը հարցնում է Անիին.

- Ի՞նչ է անում հրեշտը։

- Կրակներ է վառում։

- Մարո՞ւմ, թե վառում։

- Վա՛յ, հա, մարում։

- Իսկ ի՞նչ է անում զինվորականը,- հարցնում է մայրիկը Անիին։

- Ձիմվոր է աշխատում։

- Իսկ զինվորը ի՞նչ է անում։

- Բերք է պահում։

- Դի՞րք, թե բերք։

- Դիրք։ Ես սխալվեցի։

Մի օր չարածճի Անիին 94-ամյա տատը հանդիմանում է՝ ասելով, որ նա խաղալուց հետո պետք է հավաքի խաղալիքները։ Տատիկի հանդիմանությունը զնալով շատանում են։ Մի օր էլ Անին չի համբերում և վերցնում է իր խաղալիքը հեռախոսը ու ասում.

- Բարև ձեզ, ոստիկան, կարո՞ղ եք գալ Դավիթ Բեկ փողոցի 2 տունը և տատիկիս տանք։

Բարեբախտաբար տատիկը չի կռահում, թե ինչ ասաց չորսամյա չարածճի ծոռնիկը։

Փոքրիկ Անիի
ասածները
գրի առավ Լուսինե
մայրիկը

ԱՄԱՆՈՐՅԱ ԱՎԱՆՂՈՒՅԹՆԵՐ

ԱՄԱՆՈՒՄ ՆՈՐ ՏԱՐՎԱՆ «ՏԱՐ ՂՈՒՄ» ԷԻՆՔ ԱՄՈՒՄ

Տարվա սկիզբը, տարվա վերջը
Թող Աստված բաշխի քո տան մեծին ու փոքրին
Ինչ որ բան ձգիր այս ծերունու պարկը...

Այս խաղիկներում առաջին տողն ընդհանուր առմամբ նույնն է, սակայն երկրորդ տողի մաղթանքի հատվածում տարբերություն է նկատվում: Օրինակ, այն տներում, որտեղ նորահարսներ կամ անուսնացած կանայք կան, կարող է տեղ գտնել նաև նման տող՝ «Աստված քեզ արու գավակ պարզի, օրորցուն դրի» դրա փոխարեն օգտագործել են նաև հետևյալ արտահայտությունները՝ «տարվա համար գերանդի թող տա, ծեղ հետ միասին խոտ հավաքի» կամ «Աստված տանդ աշխատողներ պարզի»:

Մաղթանքի հատվածից հետո խաղիկն ավարտվում է երեխաների՝ ներքև իջեցրած գուլպայի կամ պարկի մեջ նվերների դնելու ցանկություններով: «Մի բան նետեք այս ծերունու տոպրակի մեջ...»:
Խաղիկները երգելուց հետո երեխաները, ստանալով տան ամենատարեց կնոջ՝ մեր «չոչո» անվանած անձի, տան և սրտի հարստության սահմաններում տված նվերները, ճանապարհ են ընկնում դեպի հաջորդ տուն:

Եթե նվեր են առում, չպատկերացնեք քաղաքացի երեխաների ստացած թանկարժեք խաղալիքները, հագուստները: Գյուղական վայրում ամենագեղեցիկ նվերը, որը կարող էր տալ երեխային, նրա սիրելի ուտելիք ընկույզը, պաստեղը, շարանը (ընկույզի պաստեղ), չիր ու չամիչը կամ էլ փղղընչն է (ուտելիք, որը քրդերեն «թաու», «թեյ», արաբերեն «գըրնազ» է կոչվում, որի փոքրիկ հատիկները երեխաները թղթե խոտրվակներով շարտում են, քաղցր, դեղին գույնի և ոլոռի մեծությամբ է):

Տարվա ամենահաջողակին որոշում էր փորձիկը:

Չնայած իրենց հասակին հասնող ծյանը՝ ծնունդը բոլոր երեխաները այցելում էին գյուղի ամեն մի քրիստոնյայի և մուսուլմանի տան կտուրը և երբ իրենց հավաքած ուտելիքների մեծ մասը կուլ տված՝ վերադառնում էին տուն, տանը նրանց մայրերը, տատիկներն ու մյուս հարսները վաղուց արդեն սկսած էին լինում երեկոյի համար պատրաստությունները: Այդ օրը մեր սեղանի զարդն էր փորձիկ (փուրճիկ) ուտեստը: Այդ պատճառով մեր հողվածը շարունակեց՝ փորձիկ պատրաստելով:

Սովորական օրերին կարագով և կաթով պատրաստված փորձիկը Տար գլուխի վերածվում էր ընկույզով կարկանդակի, որը սովորում էր թողնում ամենագեղեցիկ ուտելիքն անգամ: Եթե ծեղ հետաքրքրեց, թե ինչ է Տար գլուխի փորձիկը, որից բաժին էին ուզում բոլորը՝ մեծից փոքր, կփորձեն հակիրճ պատմել:

Ցորենի ալյուրի մեջտեղը ավագանի նման բացելուց հետո ջուր ենք ավելացվում: Մեկ-երկու օր առաջ պատրաստված հացի խմորից վերցրած քիչ քանակությամբ խմորը ավագանի ջրի մեջ լուծելուց հետո (հին խմորը թթվելու պատճառով նորը խմորում է) մի քիչ աղ ավելացնելով՝ խմորը լավ հունցելուց հետո թողնում ենք՝ հանգստանալով:

Օջախում դրված կճուճում մինչև յուրը դուրս գալը սխտորթակիչով ծեծված կանեփի սերմերը քիչ քանակությամբ ալյուրով տապակում ենք, որի վրա ծեծած ըն-

կույզ ավելացնելով մեկ-երկու անգամ շրջելուց հետո փորձիկի միջուկի պատրաստությունն ավարտված է լինում (հին աղբյուրներում նշվում է, որ միջուկի մեջ կանեփի սերմի և ընկույզի հետ մեկտեղ օգտագործել են նաև պաստեղ):

Միջուկի պատրաստությունն ավարտին հասցնելուց հետո թոնի-րի կողքին թողած ուռած խմորը երկու մասի բաժանելով՝ անհրաժեշտ է երկու մասն էլ գրտնակել և կլոր տեսք տալ: Հաստ բացված խմորներից մեկի վրա ընկույզով միջուկը տարածելուց հետո խմորի մյուս շերտով ծածկում ենք, որպեսզի միջուկը չթափվի ծայրերը լավ սեղմում ենք: Այնուհետև մի գործողություն էլ կա, որը պետք է ավարտին հասցնել: Խմորը ծածկել աշնանը հավաքած չորացրած տերևներով: Մեր պապերը մտածելով, թե մեր Աղամ հոր և Եվա մոր մերկությունը ծածկելու համար օգտագործված թգենու տերևների կաթը խնդիրներ են ստեղծում, ավելի հարմար են գտել մեր խմորը ծածկելու համար օգտագործել ընկույզեղու ծառի տերևները, մենք էլ խմորը փաթաթում ենք՝ թրջելով փափկացրած ընկույզեղու տերևներով:

Մեր հացի խմորը, որը սովորական լավաշից մի քիչ ավել է մնում, թխում ենք կենտրոնում կրակ վառվող թոնրի պատերին կացնելով, քանի որ մեր փորձիկի խմորը հաստ է, անհրաժեշտ է, որ ցածր ջերմաստիճանի կրակի վրա պատրաստենք:

Քանի որ թոնրի կրակը կարգավորելու կոճակ չի եղել, մեր պապերը, ովքեր իմ խորին համոզմամբ՝ շատ խելացի են եղել, թոնրի շատ հարյուր վառվող կրակը մի անկյունում հավաքելով, խմորը թոնրի հատակին դնելով, վրան մոխիր և անթեղ լցնելով՝ շատ պարզ, բայց և շատ օգտակար լուծում են գտել: Մեր փորձիկը թոնրում կամաց-կամաց թխվում է, իսկ վրան փաթաթած ընկույզեղու տերևները խմորը պաշտպանում են մոխրից և հաճելի բույր արձակում:

Երբ կանայք թոնրի հատակին դրված փորձիկի վրա հեղձով տաք մոխիր և անթեղված կրակ են լցնում, երեխաների բանակը վաղուց շրջապատած է լինում թոնիրը: Փորձիկի պատրաստ լինելուն անհամբեր սպասող երեխաների հետաքրքրությունը միանում է կանանց անհանգստությանը, երեխաների և կանանց մեջ անխուսափելի է դառնում մի քանի անգամ բեմադրվող փախիթ-բռնիթ խաղը:

Լավ, իսկ ինչպե՞ս է մեր փորձիկը կարողանում սովորում թողնել նույնիսկ ամենագեղեցիկ ուտեստը: Այս հարցի պատասխանը գտնվում է թխվող փորձիկի մեջ գաղտնի դրված գրեթե լուցկու հատիկի չափ, երկու առանձին երկարության փոքրիկ ձողիկների մեջ (որոշ հարուստ գյուղերում ոսկե կամ արծաթե դրամ են դրել): Որևէ հետին միտք մի փնտրեք այն բանի մեջ, որ ես այս տեղեկությունը վերջում են հայտնում: Քանի որ մեր մայրերը փորձիկ պատրաստելիս երկու փոքրիկ ձողիկը խմորի մեջ գաղտնի են թաքցրել, ես էլ չգիտեմ, թե սա որ փուլում են իրականացրել:

Ինչ վերաբերում է, թե երկու ձողիկն ինչու են դրել... Փորձիկի մեջ դրված այս ձողիկներով որոշվում էր տարվա հաջողակը: Ահա սա է պատճառը, որ երեխաներն անհամբեր սպասում են փորձիկի պատրաստմանը, և հաճախ գալիս են թոնրի մոտ:

Չգուճում են, որ ուշադիր ընթերցողներ կլինեն, ովքեր կասեն. «Եթե

նպատակը տարվա հաջողակին որոշելն է, ապա երկրորդ ձողիկն ինչի՞ համար է»: Երկար ձողիկը գտնողը համարվում է տարվա հաջողակը, իսկ կարճ ձողիկ գտնողը՝ անհաջողակը:

Արաբերեն հաջողակին որոշող ձողիկին «դուլե», իսկ անհաջողակին որոշող ձողիկին «բեդուլե» են անվանում: Իսկ քրդերեն այս ձողիկների համար օգտագործվում են «բըխեր» (հաջողակ) և «թուր» (անհաջողակ, տգեղ) բառերը: Որոշ գյուղերում ձողիկների թիվը հասնում է յոթի: Ձողիկներից երկուսը որոշում էին տարվա հաջողակին, երկուսը՝ անհաջողակին, իսկ մնացած ձողիկների վրա կատարված կտրվածքներով որոշվում էին իշխանության, փողի, մեղվի փեթակների, ոչխարի հոտի, այծի հոտի առատությանը տիրացողները:

Ձողիկները փորձիկից բացի այլ ճաշերի մեջ էլ են դնում. օրինակ՝ առանց մսի քեշքեք կոչված ճաշը, որը կարող ենք անվանել նաև «չոլազ» կամ էլ ինչպես Բիթլիսի որոշ գյուղերում են անվանում՝ «բորանիե»... Բորանիեն դրումով, գլուղով (կորեկի տեսակ), աղթանով (արաբերեն «լաբան» է կոչվում, քամելով պատրաստվող յոգուրտ) և կարագով պատրաստվող ճաշատեսակ է:

Որոշ գյուղերում երկար ձողիկը գտած մարդուն նաև նվեր են տվել, բայց իրականում ամենամեծ նվերը տարվա ամենահաջողակ տիտղոսը կրելու պատիվն էր: Դա մեզ համար շատ ավելի կարևոր էր, քան դուք կարող եք ենթադրել, քանի որ հավատում էին, որ փորձիկի միջոցով որոշված անձի շնորհիվ առատությունը տուն էր գալիս. հաջողակ անձը համարվում էր տան առատության տերը:

Տան լիության տեր լինելն այնքան կարևոր էր, որ նույնիսկ որպեսզի տան լիությունը օտարի բաժին չչլանա, այն օրերին չէին ենթարկվում նախ տուն եկած հյուրին հյուրասիրելու կանոնին. փորձիկը ոչ մեկի չէին հյուրասիրում՝ տան անդամներից բացի: Երբ բաժին էին հանում նաև այդ օրը ծնված երեխային, հայրը փորձիկ չէր տալիս անգամ տուն հյուր եկած իր աղջիկներին: Հավատում էին, որ եթե ձողիկն ընկնի ամուսնացած աղջկան, ապա նա ամուսնու տուն գնալիս իր հետ կտանի տան առատությունը:

Չգիտեմ, թե երեխաների անհամբերությունն ինձ էլ է անցնել, թե ոչ, սակայն փորձիկի պատրաստելու գործողությունից անմիջապես անցում կատարեմ փորձիկի բաժանելուն: Ըստ էությանը, փորձիկը բաժանում էին կեսգիշերին: Այդ պատճառով եթե կցանկանաք վերադառնալ փորձիկը թոնրի մոխիրների մեջ թաքցնող կանանց վազվզոցներին:

Կանանց տառասանների օրը
Կանայք, ովքեր ամեն օր վեր են կենում դեռևս արևը չծագած, սակայն անկողին են մտնում, երբ բոլորը քնում են, գործերը վերջացնելուց հետո, Տար գլուխի անխորտեղի էլ մեկ այլ պարտականության անհանգստության մեջ են:

Այս անհանգստությունների պատճառը այն հավատալիքն է, որ Նոր տարին կուշտ դիմավորելու դեպքում տարվա ընթացքում սոված չես լինի: Այս պատճառով նոր տարին լի և առատ անցկացնելու համար անհրաժեշտ է խնջույք կազմակերպել, որպեսզի տան բոլոր անդամները կարողանան կուշտ ու կուռ ուտել:

Այն օրը պատրաստվող ճաշերի

տեսակներն ու քանակը պետք է երկու անգամ շատ լինի սովորական օրերից: Տար գլուխի օրը, մյուս օրերի համեմատ, տան անդամներին երկու անգամ ավելի ուտելիք տալը շատ կարևոր կանոն է, որը չի կարելի խախտել: Այս կանոնը ներառում է ոչ միայն մարդկանց, այլև միևնույն տանիքի տակ ապրող ողջ շնչավորներին՝ ոչխարից մինչև այծ, կովից մինչև հավ: Այս պատճառով Տար գլուխին տանը գտնվող ողջ կենդանիների կերի մեջ (կերի մեջ պարունակում է նաև փորձիկից մնացած մնացուկներ) երկու անգամ շատ խոտ և կեր դնելով՝ ապահովում են, որ եկող տարում նրանք էլ լիության և առատության բաժին ստանան:

Գյուղական վայրի խնջույքը ասելիս եթե պատկերացնում են այծի, ոչխարի և կաթալի մսով պատրաստված ճաշեր, ապա անհրաժեշտ է հայտնել, որ խնջույքի ժամանակ հայ կանանց պատրաստության պատասխանատվության տակ եղող Տար գլուխի սեղաններին նման ուտելիքներ չեն օգտագործվել:

Այս պատճառով, եթե մեր մայրերին ու տատիկներին հարցնենք, թե «եղել են արդյոք օրեր, որ կշտամբեն ձեզ» և՛ հայ, և՛ կին լինելու համար», կարծում են, որ բոլորը նույն պատասխանը կտան. «Տար գլուխի պատրաստությունների օրերին»: Եթե պատճառը իմանաք, նրանց իրավացի կհամարեք:

Տար գլուխը համընկնում է մեր՝ հայերիս՝ հունվարի 6-ին տոնած Սուրբ Ծննդյան տոնին նախորդող ութօրյա պահքի և ծոմի շրջանի երկրորդ կամ երրորդ օրվան: Այդ պատճառով երբ ողջ աշխարհի կանայք իրենց ընտանիքների հետ միասին Նոր տարին դիմավորելու հաճույքը շարունակելու համար մայիսից կաթնախիմ ամեն տեսակի ուտելիքներով սեղան են պատրաստում, հայ կանայք ստիպված են Տար գլուխի օրը պահքի պատճառով սեղանին չդնել կարմիր և սպիտակ միս, կաթ, պանիր, ձու, մածուց, կարագը ներառյալ՝ կենդանական ծագում ունեցող ոչ մի ապրանք, միևնույն ժամանակ սեղանը զարդարել այնպիսի ուտելիքներով, որ կարողանան հաճույքով ուտել:

Տան անդամները՝ ամենամեծից մինչև ամենափոքր, սեղանի շուրջը հավաքվելով, բուսական յուղով պատրաստված ճաշերն ուտելուց հետո սեղանին էին դնում ընկույզ, շարան, փշաք, պահված թուֆ և խնձոր, տանձ, որոնք երեխաներից թաքցրել էին, որպեսզի այդ օրվան կարողանան հասնել: Այս ուտելիքները անպատճառ պետք է լինեին Տար գլուխին:

Երեխաները, ովքեր ցերեկը հավաքած ուտելիքներից և մրգերից մնացածը թաքցնում են՝ այլ օրերին ուտելու համար, հիմա էլ իրենց տներում են ախորժակով ուտում մատուցվող ուտելիքները: Երբ մոտենում է կեսգիշերը, արդեն հերքը գալիս է թոնրի մոխիրների մեջ թխվելու համար թողնված փորձիկին. փորձիկն էլ վրայից դուրս եկող գոլորշով առանց համեստության անմիջապես իր տեղն է զբաղեցնում սեղանի գլխավոր անկյունում:

Փորձիկը պատրաստում է այն անձը, ում ձեռքերը լիության և առատության են բերում: Քանի որ նա գիտի, թե ձողիկները որտեղ են, նրա պարտքն է նաև փորձիկն այնպես կտրել, որ ձողիկները չբերան: Փորձիկը բոլորին հավասար բաժանելուց հետո աղմուկը դադար

րում է: Քանի որ իրենց բաժինը ստացած երեխաները, մի անկյուն քաշվելով, սկսում են փորձիկի մեջ արագ փնտրել ձողիկը:

Ձողիկը գտած անձը, առանց հայտնելու՝ կարճ է, թե երկար, մոտենում է փորձիկը պատրաստած անձին և ցույց տալիս ձողիկը: Փորձիկը պատրաստած անձը, եթե նույնիսկ իմանա ձողիկը կարճ է, թե երկար, չի կարող ասել:

Տարվա և հաջողակին և՛ անհաջողակին որոշող ժամանակամիջոցը կարող է երկար կամ կարճ տևել՝ ըստ ձողիկը գտած անձանց քաջության: Վերջապես արդյունքը հայտարարվում է, երբ գտնվում է նաև երկրորդ ձողիկը:

Քանի որ երկար ձողիկի տերը համարվում է տարվա ընթացքում տարվա և՛ հաջողակը, և՛ լիության տերը, ուրախությունից գոռում է, մինչդեռ կարճ ձողիկը գտած անձը ծաղր ու ծանակի ենթարկվելու պատճառով տխրում:

Առավոտը բացվելուն պես հարևանները մեկը մյուսին ծայր տալով հայտնում էին, թե երեկոյան տանն ով է դարձել հաջողակ, և ով անհաջողակ:

-Յե՛ն, Ջոզա՛ն, այս տարի ո՞վ դարձավ տան հաջողակը:

-Գևորգ մորեղբայրը, ինչպես լսեցի, այս տարվա անհաջողակն էլ Սարգիսն է:

Քրիստոնյա թե մուսուլման՝ շրջանում ապրող ամեն մի տան մեջ կիրառվող այս սովորույթը, ըստ էության, կյանքը խորհրդանշող մի խաղ է: Խաղ, որը սովորեցնում է, թե Նոր տարին ո՞նց պետք է հաջողություն և երջանկություն, իսկ ո՞նց՝ տխրություն և դժբախտություն:

Հինը գնաց, նորը կգա, Ուրախությամբ ճանապարհիդ հինը,

Ու պատրաստվեք նորի համար Բացեք դուռն ու պատուհանը Ինչ որ ցանկանում եք մաղթեք՝ Կյանք, ունեցվածք, խելք, Բոլորիդ ցանկացածը կտա: Տիկնայք և պարոնայք, Շնորհավոր ձեր Նոր տարին Երկար տարիների կյանք ձեզ:

Հողվածն ավարտելով Կիլիկիայի շրջանի Տար գլուխի տոնակատարություններին կատարվող այս հայերեն խաղիկով՝ ես էլ ձեզ են հղում երեխաների՝ մաջուր սրտով կատարած այս գեղեցիկ խաղիկների բարեմաղթանքները: Ցանկանում եմ՝ ձեզանից յուրաքանչյուրը դառնա տարվա հաջողակը, և ձեր սիրելիների հետ միասին առողջությամբ, հանգստությամբ, երջանկությամբ և բարօրությամբ անցկացրած մի տարի էլ անկացնեք:

Հայերեն խաղիկները վերցված են Հրանուշ Խաչատրյանի Հայ ժողովրդական տոներ (Երևան, 1999) աշխատությունից:

Քրդերեն Նոր տարվա երկու խաղիկ՝

Տարվա սկիզբը, տարվա վերջը Թող Աստված բաշխի քո տան մեծին ու փոքրին,

Ինչ որ բան ձգեք այս ծերունու պարկը,

Ծերունին տուն է գնում: Տարվա սկիզբը, տարվա վերջը Ինչ որ բան ձգեք այս ծերունու պարկը

Գնում է, ուշացավ, քարքուշ-մարքուշ (շուտասելուկի բառեր), Աստված թող արու գավակ դնի ձեր օրորոցում:

ՀԱՅ - ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԿԱՊԵՐ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«Աշխարհում չկա մի լեզու՝ բավականաչափ հարուստ ու գունեղ, որպեսզի նկարագրի նմանօրինակ սարսափները, որպեսզի արտահայտի այն մարմնական ու հոգեկան տառապանքները, որ կրել էին հայ անմեղ նահատակները, մինչև երկինքը հավիտենական հանգիստ կառաքեր նրանց ի վերուստ: Ահավոր ջարդերից մազապուրծ այդ մի բուռ թշվառ մարդիկ՝ իրենց բոլոր մերձավորների, իրենց համար թանկ էակների մահվան ականատեսները գտնվում են այնտեղ՝ գաղթականներում, և բարձրաստիճան թուրք պաշտոնյաների, գերմանացի սպաների ու ժանդարմների աչքի առջև ենթարկվում էին անարգանքի ու նվաստացման՝ դատապարտվելով կործանման...»:

Ժակ դը Մորգան

Հայաստանի պատմության թանգարանը, համագործակցելով աշխարհի առաջավոր այլ նման կառույցների հետ, հաճախ է կազմակերպում բացառիկ ցուցադրություններ ու միջոցառումներ: Այսպես՝ 2024 թվականի սեպտեմբերի 16-ին Միացյալ Թագավորությունից Հայաստան են բերվել պտղաբերության, մայրության հայոց աստվածուհի, ոսկեմայր Անահիտի գլխաքանդակը և ծախ ձեռքը: Սեպտեմբերի 21-ին Հայաստանի պատմության թանգարանում (ՀՊԹ) կայացավ «Մայր աստվածություն. Անահիտից Մարիամ» ցուցադրությունը, որը կշարունակվի մինչև 2025թ. մարտի 21-ը: Իսկ դեկտեմբերի 11-ին նույն թանգարանում տեղի ունեցավ «Երեկ և այսօր. Ժակ դը Մորգանի հետքերով» խորագիրը կրող միջազգային ցուցահանդեսի բացումը: Այս կարևոր իրադարձությունը իրողություն է դարձել ՀՊԹ և Ֆրանսիայի ազգային հնագիտության թանգարանի (Սեն Ժերմեն ան Լեյի ամրոց) համագործակցությամբ, Հայաստանի Հանրապետությունում Ֆրանսիայի Հանրապետության դեսպանատան և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (ԿԳՄՍՆ) աջակցությամբ: Ցուցադրության բացմանը ներկա էին ՀՀ ԿԳՄՍՆ փոխնախարար Ալֆրեդ Քոչարյանը, ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպան Օլիվիե Դըկոտինյին, Ֆրանսիայի դեսպանության մշա-

կույթի և համագործակցության հարցերով խորհրդակցության, տնօրեն Քսավիե Ռիշարը, Ֆրանսիայի ազգային հնագիտության թանգարանի տնօրեն Ռոզ-Մարի Մուսսոն, ինչպես նաև Երևանում գործող տարբեր թանգարանների տնօրեններ, ներկայացուցիչներ, հնագիտության, մշակույթի, այլ բնագավառների ներկայացուցիչներ:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՊԹ տնօրեն Դավիթ Պողոսյանը: Կարևորագույն միջազգային նշանակալի ձեռնարկը նաև հայ-ֆրանսիական բարեկամության, երկու երկրների մշակութային, գիտական գործիչների համագործակցության շրջանակներում: «Առաջին անգամ ցուցահանդեսի շրջանակում հնարավորություն ունենք տեսնելու 130 տարի առաջ հայտնի հնագետ Ժակ դը Մորգանի կողմից Հայաստանի հյուսիսային շրջաններում՝ Ախթալայում, նրա շրջակայքում պեղված հնագիտական ժառանգությունից հինգ ուշագրավ նմուշներ», - ասաց Դ. Պողոսյանը՝ հավելելով, որ Ֆրանսիայից բերված ցուցանմուշների հետ ցուցադրվելու են նաև տեղական ժամանակով՝ 1990-ականներից սկսած, մեր երկրում հայ-ֆրանսիական միացյալ հնագիտական արշավախմբերի պեղումների արդյունքում հայտնաբերված և Հայաստանի տարբեր թանգարաններում պահվող 60-ից ավելի հնագիտական իրեր: Դ. Պողոսյանը շնորհակալություն հայտնեց համագործակցության և ցուցադրության կազմակերպմանն աջակցողներին: Ցուցահանդեսի շրջանակներում Հայաստանի պատմության թանգարանը համագործակցել է նաև Հայաստանում Ֆրանսիայի դեսպանության Ֆրանսիական ինստիտուտի, Ֆրանսիայի ժառանգության ինստիտուտի, «Երեբունի» պատմահնագիտական ամրոց-թանգարանի, Շիրակի երկրագիտական թանգարանի,

թային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի, ինչպես նաև տարբեր կառույցներից ներգրավված մասնագետների հետ:

Իր խոսքում ՀՀ ԿԳՄՍՆ փոխնախարար Ա. Քոչարյանը ողջունեց միջազգային ցուցադրության բացումը, կարևորեց Հայաստանի պատմության թանգարանի համագործակցությունը համաշխարհային նման կառույցների հետ: Հավելեց նաև՝ 2025-ին



Հայաստանի պատմության թանգարանը համագործակցելու է Լուվրի թանգարանի հետ: Շնորհակալություն հայտնեց Ֆրանսիայի դեսպանին՝ տարբեր բնագավառներում համագործակցելու համար:

Ֆրանսիայի ազգային հնագիտության թանգարանի տնօրեն Ռոզ-Մարի Մուսսոն ողջունեց համագործակցությունը Հայաստանի մայր թանգարանի հետ՝ նշելով, որ այն 2 տարի առաջ Դավիթ Պողոսյանի հետ հանդիպման արդյունք է: Հավաստեց, որ համագործակցությունը լինելու է շարունակական: Տեղեկացրեց, որ իր ղեկավարած թանգարանը գործում է 19-րդ դարավերջից, և այստեղ պահվում են նաև այդ ժամանակներում հնագիտական պեղումներից հայտնաբերված ցուցանմուշներ:

Ներկաներին ողջունեց նաև ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպան Օլիվիե Դըկոտինյին: Խոսելով Ժակ դը Մորգանի մասին՝ ասաց, որ նա ժամանակին անդրադարձել է նաև Հայոց մեծ եղեռնի խնդիրներին, հատկա-



պես երբ պեղումներ է իրականացրել Դեր Ջորում: Նա կարևորեց համագործակցությունը երկու թանգարանների միջև:

Ելույթներից հետո ներկաներն այցելեցին ցուցասրահ, որտեղ ներկայացված են նշված ցուցանմուշները՝ պղնձե գարդեր, գեներ, կենցաղային առարկաներ, խեցեղեն և այլն: Ցուցասրահի պատերը զարդարված են ժամանակաշրջանը հիշեցնող նկարներով: Կա եռալեզու տեղեկություն ցուցանմուշների մասին: Առանձին ներկայացված է Ժակ դը Մորգանի կենսագրականը:


Հնագետ և պատմաբան, մասնագիտությամբ հանքային ճարտարագետ Ժակ Մարի դը Մորգանը (ֆր.՝ Jacques Jean Marie de Morgan) ծնվել է 1857թ. հունիսի 3-ին, վախճանվել 1924թ. հունիսի 12-ին Մարսել քաղաքում: Նա Հայաստան առաջին անգամ եկել է 1886թ.՝ Ֆրանսիացի ներդրողների կողմից Ախթալայի հանքերում որպես ինժեներ աշխատելու: Սակայն շուտով սկսել է նա հնագիտական հետազոտություններ իրականացրել Ախթալայում, Դեբեդ գետի ավազանի մի շարք դամբարանադաշտերում, Ալավերդում և Լավլարի ստորոտներին տեղորոշվող հուշարձաններում: Ընդհանուր առմամբ՝ տարածաշրջանում Ժակ դը Մորգանը պեղել է ավելի քան 1000 դամբարան, որոնք ժամանակագրորեն ընդգրկում են Ք. ա. 15-րդ դարից մինչև Ք. ա. 2-1-ին դարերը: Բացի Հայաստանի տարածքից՝ Ժակ դը Մորգանը պեղել է Աբենեյան Դարսկաստանի մայրաքաղաք Շոշ քաղաքը, անդրադարձել է Ուրարտուի պատմությանը: Առավել կարևոր է, որ Արշակ Չոպանյանի խնդրանքով գրել է նաև «Հայ ժողովրդի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» գիրքը: Այս աշխատությունում անդրադարձել է նաև Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի հանդեպ իրականացրած ցեղասպանությանը:

Ներկաները ծանոթացան ցուցադրված նմուշներին, դրանց մասին գրված տեղեկություններին: Ցուցասրահը գործում է «Մայր աստվածություն. Անահիտից Մարիամ» ցուցադրության սրահի դիմաց և բաց է լինելու մինչև 2025թ. մարտի 11-ը:

Հոհրաբ ԸՈՔՈՅԱՆ

Անմահ հերոսներ

ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ԵՎԻՐԵՅՑ ԱՄԵՆԱԹԱՆԿԸ՝ ԿՅԱՆՔԸ



Փրկարար լինելն առաքելություն է եւ մեկ անգամ չէ, որ մեր փրկարարներն ապացուցել են դա իրենց անձնուրաց աշխատանքով, հաճախ էլ նաեւ իրենց առողջության ու կյանքի գնով՝ փրկելով հազարավոր կյանքեր: Նրանց ուժը, նվիրումը, անձնուրացությունը, խիզախությունն ու ստանձնած գործի նկատմամբ պատասխանատվությունը քաղաքացիների ու հայրենիքի անվտանգ առօրյայի ամուր հիմքն են: Այդպիսի պատասխանատու ու իր գործին նվիրված, վստա-

հելի ընկեր ու սիրելի ամուսին ու հայր էր մեր հերոս-փրկարարը, որի մասին մեծարանքով են պատմում նրա ընկերները:

Փրկարարի մասին խոսելիս անհնար է գերծ մնալ «հերոս» բառից, ինչը նրանց կատարած աշխատանքի բարձրագույն գնահատականն է: Իսկ երբ փրկարարը գոհաբերում է ամենաթանկը՝ կյանքը, հանուն հայրենիքի ու հայրենակիցների, նրան թերեւս պետք է կոչել անմահ հերոս-փրկարար:

Ավագ-լեյտենանտ Դավիթ Վլադիմիրի Դուլիսյանը ծնվել է 1983թ. սեպտեմբերի 10-ին Արցախում՝ Ստեփանակերտում: Դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Ստեփանակերտի գյուղատնտեսական ջուլթե՝ «Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում եւ հսկում» մասնագիտությամբ: 2002թ. զորակոչվել է Հայոց բանակ: 2004թ. ընդունվել է Երեւանի մեներջման ինստիտուտի «Ձեռնարկությունների տնտեսագիտություն եւ կառավարում» մասնագիտությամբ: 2006թ. ծառայության է անցել Ար պետական ծառայության արագ արձագանքման հատուկ ստորաբաժան-

ման օպերատիվ խմբում: Եղել է առաջին խմբի առաջին ջոկի իրամանատարը՝ ավագ-լեյտենանտի կոչումով:

2020թ. Արցախի դեռ սկսված պատերազմի ընթացքում ԱրՊԾ համահավաք վաշտի անձնակազմի հետ մեկտեղ մասնակցել է հայրենիքի պաշտպանության համար մղված ռազմական գործողություններին:

Իր աշխատանքին նվիրված, բարի, համեստ, խելացի, միշտ իր ունակություններով աչքի ընկնող փրկարարը անմահացավ նոյեմբերի 6-ին Շուշիի շրջանում:

ԱՀ նախագահի հրամանագրով՝ Դ. Դուլիսյանը հետմահու պարգևատրվել է «Արիություն» մեդալով: Հանգչում է «Եռաբլուր» զինվորական պանթեոնում:

Ամուսնացած էր, ունի երկու դուստր:

Ընկերները՝ Սերգեյ Դավիդյանն ու Մխիթար Գրիգորյանը, ընկերոջ կորստի վիշտը իրար հետ կիսում են հաճախակի նրա մասին հիշելով, ընտանիքի հետ մշտական շփման մեջ գտնվելով, վերհիշելով Դավիթի հետ ապրած ուրախ ու

դժվար օրերը: Սերգեյը պատմում է, որ նրանք ընկերացել են բանակում ծառայելու ժամանակ: Դավիթը խելացի, հետաքրքրասեր տղա էր: Բանակում իրեն դրսեւորում էր որպես արժանի զինվոր ու մարդ, սկզբունքորեն չէր տանում անարդարությունը, միշտ կողմ էր ճշտին ու ճշտապահությանը: «Ծառայությունը բանակում ավարտելուց հետո ես մտա ՓԾ՝ որպես փրկարար: Որոշ ժամանակ հետո Դավիթը նույնպես ծառայության մտավ մեզ մոտ: Ինչպես որ բանակում, ՓԾ-ում նույնպես իրեն հոյակապ էր դրսեւորում՝ թե որպես փրկարար, թե որպես ընկեր:

Մխիթարը նույնպես Դավիթի հետ ընկերացավ փրկարարական ծառայության ընթացքում: Հիշում է ու պատմում, թե միասին ինչ փորձություններ են հաղթահարել: Դավիթի մասին արտահայտվում է որպես շատ պատասխանատու ու վստահելի մարդու մասին: Ասում է, որ պատասխանատու առաջադրանքներին պարտադիր Դավիթին էին ուղարկում՝ նկատելով նրա խիզախությունը, պատասխանատվության բարձր զգացումը: Նաեւ կատակներն են հաճախ հիշում, որ իրենց ընկերական շրջապատից անպակաս էր լինում:

Դավիթը հեռացավ, բայց հիշատակը մշտապես վառ մնաց նրան ճանաչող մարդկանց սրտերում: Նաեւ կաթողեց իր վառ անունը՝ որպես նվիրված փրկարարի, որպես վստահելի ու պատասխանատու ընկերոջ, որպես հավատարիմ ամուսնու ու սիրող հոր:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ՎԵՐՋԻՆ ԷՋ

ԱՄԱՆՈՐՅԱ ԾԱՇԱՑՈՒՑԱԿԸ՝ ՄՆԵՂԱԲԱՆԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ

Արցախցիների համար անցնող տարին բարդ էր, հոգսաշատ ու անորոշ ապագայի դառնություններ լեցուն: Շուտով Ամանոր է: Չնայած ամեն ինչին, այնուամենայնիվ արցախցիները, պահպանելով ավանդույթը, նշելու են Նոր տարին, թեկուզ համեստ սեղանի շուրջ, թեկուզ ոչ իրենց տներում: Իսկ թե ինչպես կազմել ճիշտ ճաշացուցակ, որը ոչ միայն վնասակար չէ, խնայողական է, այլև՝ համեղ, պարզաբանեցիկն էր զուրա-ֆիթնեսի մարզիչ ու սննդաբան Լատրա ՄԱՅԱԿԱՆՅԱՆԻ հետ:

Արցախից բռնատեղահամվելուց հետո Լատրա Մնացականյանն աշխատում է Երևանի՝ աղջիկների համար «Լեդի զոն» ֆիթնես ակումբում՝ որպես զուրա-ֆիթնեսի կարգիտ մարզիչ:

- Լատրա, նախատոնական օրերին միմյանց հաճախ տրվող հարցերից է, թե արդյոք նախապատրաստվում եք նշել Ամանորը: Մենք էլ չենք շրջանցի նույն հարցը, ես կավելացնեմ՝ ինչպե՞ս եք պատրաստվում դիմավորել Նոր տարին, ինչպե՞ս եք տրամադրված:

- Անկախ ամեն ինչից, ես համարում եմ, որ Նոր տարին հրաշքի տոն է, ընտանիքի տոն, որը պետք է լինի յուրաքանչյուր ընտանիքում: Ամանորը տոն է, որը չպետք է կախված լինի տրամադրությունից, ֆինանսական վիճակից: Չնայած ամեն ինչին, մենք կարող ենք գոնե մի փոքր հրաշք ստեղծել մեր ընտանիքներում, մեր երեխաների համար՝ պարզապես ուրախացնելով նրանց թեկուզ մի փոքր բանով, ես տոնական տրամադրությունը կստեղծվի ինքնուրույն: Այո, մենք անպայման նշելու ենք, թեկուզ թող լինի փոքր ու համեստ սեղան: Ուզում եմ ընդգծել, որ անկախ ամեն ինչից ենք դա անում:

- Ձուրա-ֆիթնես պարապող մարզիկների հոսք կա՞ դեպի դահլիճ՝ տոները լավ

մարզավիճակում դիմավորելու նպատակով:

- Չարմանալի չթվա, բայց այցելուների ու մարզավիճակի հոսքը նվազել է: Չնայած նրան, որ կարծում էինք, թե դեկտեմբերին մարզավիճակի թիվը կավելանա, այնուամենայնիվ հակառակը եղավ. հավանաբար բու



լորը գումար են տնտեսում ամանորյա սեղանի համար: Մինչդեռ ունենք այն կորիզը, որն ընթացում է մոտենում բոլոր հարցերին ես հասկանում է, որ կարելի է ստամոքսը լցնել չէ, այլ՝ առողջ ու գեղեցիկ լինելը: Իհարկե, առաջին հերթին՝ առողջ լինելը: Ունենք մարզիկներ, որոնք միշտ ներկա են պարապմունքներին, մենք նրանց անվանում ենք «մշտականներ»: Անկախ բոլոր հանգամանքներից՝ նրանք բաց չեն թողնում մարզվելու հնարավորությունը:

- Ի՞նչ հաշվի առնել ես ի՞նչ սկզբունքների վրա հիմնվել ամանորյա ճաշացուցակ կազմելիս:

- Քանի որ մեր հայկական կերուխուրը հիմնականում լինում է շոքոլ, պարունակում է շատ ճարպային եւ մսային ուտեստներ, ապա առաջարկում եմ, ես ինքս էլ փորձում եմ մեր տանը կիրառել, չնայած հանդիպում եմ անհամաձայնությունների հատկապես տղամարդկանց կողմից, գնումների ցուցա

կում ավելացնել ավելի շատ միրգ ու բանջարեղեն: Թարմ միրգ ու բանջարեղեն. ահա սա է պետք շոքոլե սեղանին: Եվ դրանցով կազմված աղցաններ պատրաստել: Քչացնել առատ ճարպեր պարունակող մթերքները, քաղցր եւ ռաֆինացվածը: Այն բանից հետո, երբ ես դասընթացներ անցա եւ դարձա սննդաբան, արդեն որերորդ տարին է շարունակում եմ եւ այդ ոլորտում գիտելիքներս կատարելագործել, եւ ինքս ճիշտ սնվելու սկզբունքները պահպանել թե՛ ընտանիքում, թե՛ ուրիշ տեղ: Այդ պատճառով էլ ամանորյա ճաշացանկը կազմելիս առաջնորդվում եմ նրանով, որ սեղանին լինի ավելի շատ կանաչեղեն, միրգ ու բանջարեղեն: Փորձեք ու կտեսնեք, որ եւ ստամոքսն է ձեզ շնորհակալ լինելու, եւ տարին է առատ լինելու:

- Իսկ ներկայում տիրող գնաճի պայմաններում ինչպե՞ս կազմել ամանորյա հարմար ճաշացանկ, որը ոչ միայն օգտակար լինի, այլ նաեւ համեղ ու խնայողական:

- Կրկնեմ, որ ամեն դեպքում շեշտը պետք է դնել թարմ կանաչեղենի, մրգերի ու բանջարեղենի վրա: Կան բազմաթիվ տարբեր բաղադրատոմսեր՝ առանձին մրգերով ու բանջարեղենով շատ համեղ աղցաններ պատրաստելու համար: Կան նաեւ բաղադրատոմսերի միջա տարբերակներ, որոնք սովորեցնում են, թե ինչպես կարելի է համադրել մրգերն ու բանջարեղենը մեկ աղցանի կազմում: Ի միջի այլոց, դրանք շատ օգտակար աղցաններ են, որովհետեւ պարունակում են մեր օրգանիզմի համար անհրաժեշտ ու օգտակար վիտամիններ, միներալներ, բջջանյութ: Առավել եւս, եթե մենք դա ընդունում ենք ու զիջերին, պետք է հաշվի առնենք, որ սնունդը պետք է դյուրամարս լինի: Օգտակար են նաեւ խորովոցում (գրիլ) պատրաստված բանջարեղենը, որոնք մենք սիրում ենք: Ստեղծելից մախընտրելի է ձուկը կամ որեւէ թռչնամիս, որոնք նույնպես կարե

լի է խորովոցում պատրաստել կամ պարզապես եփած մատուցել: Խոզի ու տավարի մսերը, անշուշտ, շատերի ամանորյա սեղանի անբաժան մասն են կազմում, բայց եթե մենք պատրաստվում ենք ճաշել գիշերը ու մտածում ենք գումար տնտեսել, ուրեմն նախապատվությունը տալիս ենք թռչնամսին, աղցաններին ու թարմ մրգերին: Համացանցը ողողված է բազմաթիվ բաղադրատոմսերով, որոնք խնայողական են, օգտակար ու համեղ: Ուղղակի պետք է չալարել, նայել ու խորանալ, գուցե եւ սովորել՝ մեր իսկ առողջության համար:

- Ձեր ամանորյա մաղթանքը մեր ընթերցողներին:

- Անկախ նրանից, թե տարվա ինչ եղանակ է, եւ ընդհանրապես անկախ բոլոր հանգամանքներից ու տոներից, ցանկանում եմ բոլորը հասկանան ու գիտակցեն, որ իրենց պետք է առողջ ու գեղեցիկ մարմին, եւ սկսեն դրան հասնելու առաջին քայլերը: Դա թույլ կտա հասկանալ, թե որքան է կյանքը հիասքանչ: Կյանքը կարող ենք ապրել հեշտ ու առանց հիվանդությունների, երբ գիտակցենք ու հասկանանք, որ մենք սնվում ենք այնպես, ինչպես որ մարզվում ենք, հասկանանք, թե ինչու ենք վատ քնում: Ցանկանում եմ, որ բոլորը գան այդ գիտակցման գալիք նոր տարում: Չէ՞ որ եթե մենք ճիշտ սնվենք, ճիշտ մարզվենք ու լավ քնենք, ապա մենք երբեք չենք բախվի լուրջ հիվանդությունների, որոնք ամբողջ աշխարհում տարածված են: Բայց դրան պետք է հասնել ինքնուրույն, քանի որ փորձը ցույց է տալիս, որ եթե չկա գիտակցում, ուրեմն կողքից ոչ մի ջանք իմաստ չունի: Ուստի մաղթում եմ մեր ընթերցողներին եւ բոլորին ունենալ այդ գիտակցումը նոր տարում: Այդ դեպքում արդեն կբացվեն եւ նոր հնարավորություններ, եւ նոր աշխարհ, որտեղ ամեն ինչ հասանելի է:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

Արցախի բանահյուսություն

Սկիզբը՝ նախորդ համարներում

173. Լուզում երկան, գողը՝ տերտակ: Լեզուն երկար, գլուխը դատարկ:

174. Կորեն չընաղան տյուս եկավ, չընաղեն հավան չի կացավ: Կրիան պատյանից դուրս եկավ, պատյանին չհավանեց:

175. Ամենը, ծնունդը մի խելքը հի՞նչ անե: Ամառ-ծնունդ մի խելքը ի՞նչ անի:

176. Մարթ հինգ ըխայուրա ճուր խմե, ընդեղ պըրտողել չի: Մարդ ինչ աղբյուրից ջուր խմի, այնտեղ չի պղտորի:

177. Թող ասին կյեշա, ասին վուչ՝ էշ ա- Թող ասեն գեշ է, չասեն՝ էշ է:

178. Դյուզ խուսելան, փափաղս ծոռ ա: Գիշտ խոսելուց փափաղս ծոռ է:

179. Հանց սոտ ասե, վըբեր իփած հավը ծըծաղե: Այնպիսի սուտ ասա, որ եփած հավը ծիծաղի:

180. Դուզ խուսողեն փափաղը ծակա: Գիշտ խոսողի գոպը ծակ է:

181. Դյուզ խոսքը գյափուսը կասին: Գիշտ խոսքը կատակով կասեն:

182. Եք ծոռ նստինք, դյուզ խոսինք: Արի ծուռ նստենք, ճիշտ խոսենք:

183. Հագար սոտ, մին դորթ չարժի: Հագար սուտ մի ճիշտ չարժե:

184. Հինգ կործ օնին կրունցումը, վըբեր փըթաթվիմ յափընջումը: Ինչ գործ ունեն կամրջում, որ փաթաթվեմ յափնջում:

185. Շանը նհետ հընգորթուն ըրա, փաղը ծեռքատ վըբեր չի տինիս: Շան հետ ընկերություն արա, բայց փայտը ծեռքիցդ վայր մի դիր:

186. Ծանդը տեղըտ թիթևանալ մեր: Ծանդ տեղդ մի թեթևացրու:

187. Հագար չափե, մին կըտրե: Հագար չափիր, մեկ կտրիր:

188. Օխտը չափե, մին կըտրե: Յոթ անգամ չափիր, մեկ կտրիր:

189. Քըզանա մեծեն միար պահած տեղը նստիս վուչ: Քեզանից մեծի համար պահած տեղը մի նստիր:

190. Խոսկը պիրանուսըտ իփի, ետնան ասե: Խոսքը բերանումդ եփիր, հետո ասա:

191. Մին կա՝ հագար աժի, հագար կա՝ մին չաժի: Մին կա՝

հագար արժե, հագար կա՝ մեկ չարժե:

192. Մարթ կա՝ մարթ ա, մարթ կա՝ մարթու կրկատան ա: Մարդ կա՝ մարդ է, մարդ կա՝ մարդու կարկատան է:

193. Ածան հավը կզկչան կինի: Ածան հավը կզկչան կինի:

194. Բրատու ծառը կըլոխը կախ կըբցի: Բերքատու ծառը գլուխը կախ կլինի:

195. Լիզը հասկը կըլոխը կախ կինի: Լիզը հասկի գլուխը կախ կլինի:

196. Բրատու ծառեն ծղները քաշ ըն ինում: Բերքատու ծառի ծյուղերը ցածր են լինում:

197. Ծիծին անե՝ կուկուն՝ տանե: Ծպոռն անե, կկուն տանի:

198. Հիշտեղ բունն ասիս, ընդեղ էլ՝ ինը ասե: Որտեղ բունն ասես, այնտեղ էլ ինը ասա:

199. Հըրկանեն ասիցիզը օզիլ չըն: Հարկանի աղջկան չեն ուզի:

200. Մին տաս՝ երկու կոզի: Մեկ տաս, երկու կոզի:

201. Մազը երկան՝ խելքը՝ կարծ: Մազը երկար, խելքը՝ կարծ:

202. Մարթ կա՝ մարթ ա, մարթ կա՝ գարդ ա:

203 Խոսկըտ ծընդրթիթս ըրա,

ետնան ասե: Խոսքը ծանրութեթև արա, հետո ասա:

204. Հինչու տնագ անիս՝ քթտ կըփըսնե: Ինչի տնագ անես, քթիդ կըլուսնի:

205. Էշը կերալ ըս՝ հաքվեն տյեմ ընգալ: Էշը կերել է, պոչին դեմ առել:

206. Վեթեղ տիրին խալիչին, թուլ ընգալ: Վեթիսին դրին խալիչի վրա, գլուխը:

207. Վեթեղեն սուրուն վըբեր շոռ կյա, կաղլեզը առաջ կըղնե: Ոչխարի հոտը որ շրջվի, կաղը առաջ կընկնի:

208. Հուվեր աղա՝ մունք ծառա: Ով աղա՝ մենք ծառա:

209. Մին մարթ կարել չի լոխճու հետե լյավ ինի: Մեկ մարդը չի կարող բոլորի համար լավ լինի:

210. Մին խոսկ օնին, լոխ ծոռ: Մի խոսք ունեն, ամբողջը ծոռ:

211. Ծոռը կերածը՝ կըբաքե: Ծոռը կերածը կկողի:

212. Ծըեն կընաս, շենան պատառ տյեմ կընաս: Ծենան կենաս, շենից մի քիչ դեն գնաս:

213. Հացը շտահավ կոտին: Հացը պարծակով կլուտեն:

214. Խընճաղա՝ քաչալ դաղա:

215. Սերավ կացեք, լյավ

կացեք՝ հարուր տարե տյեմ կացեք: Միրով եղեք, լավ եղեք, հարյուր տարի դեմ կացեք:

216. Տըեղըտ սըխ կաց, դայիմ կաց՝ հարուր տարե տյեմ կաց: Տեղդ պինդ կաց, դայիմ կաց, հարյուր տարի դեմ կաց:

Շարունակելի

Աղբյուր/Արշալույս/ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կորել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից ժամանա Ռաֆայելի Բեգլարյանին 05.03.2015թ. տրված՝ Նորագույն շրջանի հայ գրականություն (ժ.01.02) բնագավառում (ատենախոսության թեման՝ «Հայկ հաջատրյանի պատմավեպը») բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան շնորհելու մասին վկայագիրը: Համարել անվավեր: